ՀԱՄԱՏԵՂ
ծրագիր

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների կատարման մշտադիտարկման (մոնիտորինգ)

ԶԵԿՈՒՅՑ

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
հասարակական կազմակերպություն
Հոկտեմբեր - 2018

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների կատարման մշտադիտարկման

2018թ-ի տարեկան զեկույցի բովանդակությունը

Համատեղ ծրագրի մասին ..... էջ՝ 3

Մոնիտորինգի նպատակը եւ խնդիրները ..... էջ՝ 4

Մոնիտորինգի մեթոդաբանությունը ..... էջ՝ 5

Կատարված աշխատանքի մասին ..... էջ՝ 7

Ընդհանուր դիտարկում համայնքապետերի արձագանքների մասին ..... էջ՝ 10

1. Վերլուծություն

1.1. Համայնքապետերի պատասխանների վերլուծությունը ըստ որակական եւ քանակական ցուցանիշների ..... էջ՝ 12

1.2. Ստացված պատասխանների վերլուծությունը՝ ըստ օրենքով նախատեսված ժամկետների համապատասխանության ..... էջ՝ 21

1.3. Հանրային քննարկումների կամ լսումների պրակտիկայի վերլուծություն ..... էջ՝ 27

1.4. Հանրությանը ՏԻՄ-երի կողմից տեղեկությունների հրապարակման իրավիճակի վերլուծություն ..... էջ՝ 34

1.5. Ավագանու գործունեության թափանցիկությունը ..... էջ՝ 40

2. Բացահայտումներ եւ առաջարկվող կարգավորումներ ..... էջ՝ 43

3. Եզրափակում ..... էջ՝ 47

Հավելվածներ

Հավելված 1. Համայնքապետերին հղված տեղեկության հարցման օրինակ ..... էջ՝ 51

Հավելված 2. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք ..... էջ՝ 54

«Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը»՝
ՀաՄաՏեղ ծրագիր

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների
կատարման մոնիտորինգի

ԶԵԿՈՒՅՑ

ՀաՄաՏեղ ծրագրի մասին

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (**ՀաՄաՏեղ**) ծրագրի շրջանակներում 2016-2019 թվականներին իրականացնում է ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) կողմից մի քանի օրենքներով նախատեսված պարտադիր գործառույթների իրականացման մշտադիտարկում (դիտարկում-հսկողություն), իսկ արդյունքների մասին պարբերաբար իրազեկում է հանրությանը եւ ուսումնասիրվող համայնքներին՝ մարզային համաժողովների ձեւաչափով եւ անվանական նամակագրությամբ:

ՀաՄաՏեղ ծրագիրն իրականացվում է համընկերության կողմից, որի կազմում են Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ), Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոնը (ՏՀԶԿԿ), Երեւանի մամուլի ակումբը (ԵՄԱ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (ԺԱԱ), Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ), Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը (ՀՌԿԿ): Ծրագրի նպատակն է բարձրացնել հանրային մասնակցության աստիճանը ապակենտրոնացման եւ տեղական ինքնակառավարման բարեփոխումներում: Ծրագիրը քաղաքացիներին տրամադրում է վստահելի տեղեկատվություն եւ հզորացնում քաղաքացիական հասարակությանը՝ արդյունավետ, հաշվետու եւ մասնակցային տեղական ինքնակառավարումը խթանելու նպատակով:

Ծրագրի ժամկետները. 2014-2019 թվականներ

Մոնիտորինգի նպատակը եւ խնդիրները

Մոնիտորինգի (մշտադիտարկում) նպատակն է ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ ՏԻՄ-երի թափանցիկության, հաշվետվողականության եւ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության մակարդակի եւ որակի բարձրացումը:

Մոնիտորինգի հիմնական խնդիրները հետեւյալն են.

1. **ՏԻՄ-երի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի[1] 9-րդ հոդվածով նախատեսված՝ անձանց տեղեկությունների հարցումներին օրենքին համաձայն պատասխանելու պրակտիկան. արդյո՞ք օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով են ՏԻՄ-երը պատասխանում անձանց տեղեկության հարցումներին:**
2. **ՏԻՄ-երի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված տեղեկությունների պաշարի պրոակտիվ[2] տրամադրումը հանրությանը. Ինչպե՞ս, ի՞նչ ծավալով է դա արվում:** (ՏԻՄ-երի կողմից հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) ծրագրերի, աշխատանքների եւ ծառայությունների մասին, այդ թվում նաեւ համայնքի զարգացման ծրագրերի եւ բյուջեի մասին, ՏԻՄ-երին հղվելիք գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները, համայնքի պաշտոնատար անձանց անուն-ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները, համայնքի աշխատակազմում աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը, շրջակա միջավայրի վրա համայնքապետարանի ներգործությունը, համայնքում հասարակական միջոցառումների ծրագրերը, համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների մոտ քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը, եւ այլն):
3. **ՏԻՄ-երի կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով[3] սահմանված՝ թափանցիկության, հաշվետվողականության եւ հանրային մասնակցության պարտավորությունների կատարման ծավալը եւ որակը** (Ավագանու նստավայրի գոյություն, ավագանու նիստերի մասին նախնական իրազեկում հանրությանը, ավագանու նիստերի բաց եւ մատչելի լինելու հանգամանքը, հանրային քննարկումների կամ լսումների անցկացման կարգի գոյությունը եւ պրակտիկան, համայնքապետին կից խորհրդակցական մարմինների ստեղծման կարգը եւ պրակտիկան, համայնքի ավագանուն նախաձեռնությունների իրականացման ձեւերը եւ այլն):

[1] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք՝ http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1390&lang=arm

[2] Պրոակտիվ հրապարակում-տեղեկությունների պարտադիր հրապարակում՝ այդ տեղեկություններով հետաքրքրվողների առկայությունից կամ բացակայությունից անկախ

[3] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք՝ http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1305&lang=arm

Մոնիտորինգի մեթոդաբանությունը

Ծրագրի շրջանակներում առաջին համանման մշտադիտարկումը ԺԱԱ-ն իրականացրել է 2016 թվականին, որի զեկույցը հրապարակվել է 2016թ-ի դեկտեմբերին[4]: Երկրորդ մշտադիտարկումն իրականացվել է 2017 թվականին, որի զեկույցը հրապարակվել է 2017թ-ի հոկտեմբերին[5]: 2018թ-ի մոնիտորինգից առաջ, հաշվի առնելով շահագրգիռ կողմերի հետ քննարկումները եւ առաջարկությունները, մոնիտորինգի մեթոդաբանությունը մասնակիորեն վերանայվել է:

Հայաստանի ՏԻՄ-երի թափանցիկության 2018թ-ի մշտադիտարկմամբ պարզվել է, թե որքանով են համայնքային իշխանություններն ապահովում իրենց գործունեության թափանցիկությունը «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» (Գործել է մինչեւ 2018 թ. ապրիլի 7-ը) ՀՀ օրենքներով, ինչ խնդիրներ կան այդ պարտականությունները կատարելիս: Ըստ այդմ, բացահայտումների հիման վրա կազմվել եւ թիրախ խմբերին են առաջարկվում խնդիրների կարգավորման լուծումներ: Մշտադիտարկումը պլանավորելիս ենթադրվել է արդյունավետ համագործակցություն ուսումնասիրվող ՏԻՄ-երի եւ տարածքային կառավարման մարմինների հետ, ինչը, ընդհանուր առմամբ, հաջողվել է:

Հայաստանում ՏԻՄ-երի թափանցիկության գործիքակազմն ավելի լայն է, քան այն թիրախներն են, որոնք ուսումնասիրվել են այս մշտադիտարկման շրջանակներում: Այս մշտադիտարկման շրջանակներում ընտրվել եւ ուսումնասիրվել է ՏԻՄ-երի թափանցիկության հիմնական գործիքակազմը, որն ապահովված է ՀՀ հիշատակված օրենքներով եւ ենթաօրենսդրական ակտերով.

1. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք[6]. ՀՕ-11-Ն, ընդունված է 23.09.2003:
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք[7]. ՀՕ-337, ընդունված է 07.05.2002:
3. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք[8]. ՀՕ-5-Ն, ընդունված է 15.01.2009:
4. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք[9]. ՀՕ-320, ընդունված է 03.04.2002: Գործել է մինչեւ 2018 թ. ապրիլի 7-ը:

Այս մոնիտորինգի ուսումնասիրման առարկան եղել է Հայաստանում գործող օրենսդրությամբ ՏԻՄ-երի կողմից որպես պոզիտիվ եւ նախաձեռնողական պարտականությունների խումբը, որով ՏԻՄ-երը իրավասու եւ պարտավոր են ապահովել իրենց գործունեության թափանցիկությունը՝ անկախ այդ թափանցիկության նկատմամբ համայնքացիների, համայնքացիական խմբերի կամ համայնքացիական հասարակության դրսեւորած հետաքրքրությունից:

[4] http://www.asparez.am/wp-content/uploads/2015/10/29.12.2016-General-LSG-FOI-Transp-report-2016-CFOA-USAID.pdf
[5] https://publicdata.am/wp-content/uploads/2018/05/10.10.2017-LSG-FOI-Transp-general-report-2017-CFOA-USAID.pdf
[6] http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1372
[7] http://www.arlis.am/documentview.aspx?docid=325, մինչեւ 31.12.2016 դրությամբ
[8] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95037
[9] http://www.arlis.am/documentview.aspx?docID=64495

Սույն զեկույցի ուսումնասիրման առարկաներն են եղել, մասնավորաբար.

- Տեղեկության հարցումներին համայնքների ղեկավարների արձագանքման որակը եւ ժամկետները,
- ավագանու նստավայրի առկայությունը,
- համայնքապետի կողմից հրապարակվող տեղեկությունների պաշարները եւ հրապարակման եղանակները,
- հանրային քննարկումների կամ լսումների կազմակերպման եւ իրազեկման իրավիճակը,
- ավագանու նիստերի մատչելիությունը համայնքի բնակիչների համար,
- այլ թիրախներ:

Մոնիտորինգի նպատակին հասնելու համար օգտագործվել են հետեւյալ մեթոդական գործիքները.

1. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով[10] տեղեկությունների հարցումների հղումներ համայնքապետերին, պատասխանների ստացում, հաշվառում,
2. Համայնքապետերից ստացված պատասխանների ուսումնասիրություն,
3. Համապատասխան օրենսդրության ուսումնասիրություն,
4. Ստացված տեղեկությունների վերլուծություն, խնդիրների վերհանում եւ արձանագրում,
5. Բացահայտված խնդիրների լուծումների վերաբերյալ առաջարկությունների մշակում:

Որպես մոնիտորինգային ուսումնասիրման թիրախ ընտրվել են Հայաստանի բոլոր 502 համայնքները եւ դրանց ՏԻՄ-երը, որոնք գործել են 2018 թվականի մարտի 1-ի դրությամբ:

Կատարված աշխատանքի մասին

[10] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք՝ http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1390&lang=arm

2018թ-ի մշտադիտարկման մեկնարկին տեղեկությունների հարցումներ են հղվել ՀՀ բոլոր համայնքապետերին, համակարգվել է տեղեկության հարցումների հղման, ստացման եւ արձագանքի վիճակագրությունը, համակարգվել եւ ուսումնասիրվել են նաեւ ստացված պատասխանները:

2018թ-ի հունիս ամսին կազմվել է այս մոնիտորինգի նախնական զեկույցը, որը քննարկվել է բոլոր մարզկենտրոններում, համայնքապետերի, մարզպետարանների պաշտոնյաների, տեղական քաղաքացիական հասարակության եւ լրագրողների հետ: 2018 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին, մոնիտորինգային թիմը տեղեկություններ ստանալու համար լրացուցիչ հարցումներ է հղել այն համայնքապետերին, որոնք անտեսել էին տեղեկության առաջին հարցումները եւ չէին արձագանքել դրանց: Մոնիտորինգային թիմը շարունակել է տեղեկություններ ստանալ համայնքապետերից, բանակցություններ վարել նրանց հետ, որոնք տեղեկության հարցումներին չէին պատասխանել մինչեւ նախնական զեկույցի կազմումը: Այդ ամիսներին մի շարք համայնքապետեր ԺԱԱ-ին տրամադրել են հարցված տեղեկությունները, այլ համայնքապետեր, չնայած ներդրված բանակցային ջանքերին, այդպես էլ հարցված տեղեկությունները չեն տրամադրել եւ չեն պատասխանել հարցումներին: Մանրամասները ներկայացված են զեկույցի հաջորդ բաժնում:

Ծրագրի առաջին փուլում ԺԱԱ-ն մարզ առ մարզ տեղեկության համանման մեկական հարցում է հղել ՀՀ բոլոր համայնքապետերին, խնդրելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան կարգով տրամադրել համայնքների ղեկավարների մոտ տնօրինվող մի շարք տեղեկություններ, որոնք վերաբերում են ՏԻՄ-երի լիազորություններին ու գործառույթներին եւ որեւէ օրենքով սահմանված գաղտնիք չեն պարունակում: Այդ հարցմամբ խնդրվել է տրամադրել այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են, օրինակ՝ համայնքի ավագանու 2017 թվականի բոլոր որոշումների, համայնքապետի ընդունած բոլոր իրավական ակտերի, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հրապարակման աղբյուրը, համայնքի ավագանու նստավայրի առկայությունը, հանրային իրազեկման ցուցանակների առկայությունը եւ այլն: Հարցման նմուշը ներկայացված է այս զեկույցի **հավելված 1-ում**:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով էլեկտրոնային հարցումներ չեն սահմանված, այս մոնիտորինգի շրջանակներում տեղեկության հարցումները համայնքապետերին հղվել են թղթային նամակով, դրանք ուղարկվել են փոստատնից՝ ստացման մասին ծանուցագրով: Համայնքապետը կամ նրա ներկայացուցիչը հարցումը ստանալիս ստորագրել է ծանուցագրում, որը վերադարձել է ԺԱԱ, որպես ապացույց այն բանի, որ հարցումը պատշաճ կերպով հասել է հասցեատիրոջը:

Վերլուծությունն արվել է հարցման պահին եղած բոլոր 502 համայնքների ղեկավարներին հղված հարցումների եւ դրանց արձագանքների հիման վրա:

Հարցումները հղվել են ԺԱԱ տիտղոսաթղթով, այս ծրագրի իրավախորհրդատուի անունից: Հարցման նախաբանում համայնքապետերին բացատրվել եւ մեկնաբանվել է հարցման նպատակը, եւ՝ թե ինչպես են օգտագործվելու ստացվելիք տեղեկությունները: Հատուկ նշվել է, որ, եթե հարցվող տեղեկությունները կամ դրանց մի մասը որեւէ տեղում համայնքապետն արդեն հրապարակել է, խնդրվում է այդ տեղեկությունները տրամադրելու փոխարեն ԺԱԱ-ին

տրամադրել հրապարակման աղբյուրը՝ լիարժեք հղմամբ: Խնդրվել է, հնարավորության դեպքում, տեղեկությունները տրամադրել էլեկտրոնային տարբերակով՝ այն ուղարկելով իրավախորհրդատուի էլեկտրոնային հասցեով:

Ի տարբերություն նախորդ մոնիտորինգի, այս անգամ փաստաթղթերի պատճեններ չեն հարցվել համայնքների ղեկավարներից, եթե դրանք հրապարակվել են որեւէ եղանակով: Դրա փոխարեն հարցվել են այդ փաստաթղթերի համացանցային հրապարակումների ճշգրիտ եւ ամբողջական հղումները:

Հարցումները հղվել են հետեւյալ ժամանակացույցով եւ քանակությամբ.

Աղյուսակ 1.
Հարցումների հղման ժամանակացույցը.

	Մարզեր եւ մայրաքաղաք	Հարցումների թիվը	Առաջին հարցումն ուղարկելու ամսաթիվը	Պատշաճ ստացված հարցումների թիվը	Համայնքապետերի կողմից չստացված եւ չվերադարձված հարցումների թիվը	Երկրորդ հարցումն ուղարկելու ամսաթիվը	Երկրորդ հարցումների քանակը	Պատշաճ ստացված հարցումների թիվը	Համայնքապետերի կողմից չստացված եւ/կամ չվերադարձված հարցումների թիվը
1	Արագածոտն	72	06.03.2018	71	1, Նոր Եդեսիա	03.08.2018	70	68	2
2	Արարատ	95	07.03.2018	93	2, Ազատավան, Նորամարգ	04.08.2018 - 08.08.2018	71	66	5
3	Արմավիր	97	07.03.2018	94	3, Բաղրամյան (Վաղարշապատի տարածք), Եղեգնուտ, Տարոնիկ	01.08.2018	85	77	8
4	Գեղարքունիք	57	01.03.2018	57	0	06.08.2018	45	44	1
5	Լոռի	56	09.03.2018	56	1, Վանաձոր	03.08.2018	11	10	1
6	Կոտայք	42	01.03.2018	42	0	04.08.2018 - 06.08.2018	22	22	0
7	Շիրակ	42	02.03.2018	41	0	04.08.2018 - 06.08.2018	27	27	0
8	Սյունիք	8	03.03.2018	8	0	09.08.2018	2	2	0
9	Վայոց Ձոր	8	01.03.2018	8	0	01.08.2018	2	2	0
10	Տավուշ	24	01.03.2018	23	1, Խաշթառակ	04.08.2018	14	12	2
11	Երեւան	1	01.03.2018	1	0	0	0	0	0
	Ընդամենը	**502**		**494**	**98**		**349**	**330**	**19**

Հատկանշական է, որ 2018 թվականի ՏԻՄ-երի աշխատանքի թափանցիկության մոնիտորինգի ընթացքում եղել են դեպքեր, երբ մի քանի համայնքապետեր՝ տեսնելով իրենց հասցեագրված ծանուցագրով նամակը, հրաժարվել են այն ստանալ փոստատարից: Ստորեւ ներկայացվում է այդ համայնքների ցանկը:

Աղյուսակ 2.
Նամակները ստացումը մերժած կամ չստացած համայնքների մասին

	Մարզը	Համայնքը	Նամակը չստանալու պատճառաբանությունը, Փոստատարների մակագրությունները ծրարների վրա
1	Տավուշ	Գետահովիտ	Անհայտ բաժանորդ
2	Արմավիր	1. Փշատավան 2. Մարգարա 3. Նորավան 4. Խանջյան	1. Մերժված 2. Սխալ հասցե 3. Մերժված 4. Գյուղապետը մահացած է
3	Արարատ	Ավշար	Չպահանջված
4	Արագածոտն	1. Մեծաձոր, 2. Դավթաշեն	1. Թերի հասցե 2. Որպես գյուղապետ չի աշխատում

Տեղեկության հարցումների իրավական կարգավորումը.

Անձանց տեղեկության հարցումներին արձագանքելու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգը, որով համայնքների ղեկավարները պարտավոր են պատասխանել անձանցից ստացված տեղեկությունների հարցումներին

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն, համայնքապետը տեղեկություն տնօրինող պաշտոնյա է, որը պարտավոր է անձանց տեղեկությունների հարցումներին պատասխանել եւ, հնարավորության դեպքում (երբ այդ տեղեկությունները իր մոտ տնօրինվում են եւ օրենքով սահմանված գաղտնիք չեն պարունակում), այդ տեղեկությունները տրամադրել հետաքրքրված անձանց: (Հոդված՝ 3. «… տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք…»)

Նույն օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է, որ անձանց (օրենքով չի սահմանազատված՝ իրավաբանակա՞ն, թե՞ ֆիզիկական, իսկ սա մեկնաբանվում է որպես իրավունք թե՛ ֆիզիկական, եւ թե՛ իրավաբանական անձանց համար) տեղեկության հարցումներին տեղեկություն տնօրինողները, այս դեպքում՝ **տեղական ինքնակառավարման մարմինների գործադիր ղեկավարը՝ համայնքի ղեկավարը, պարտավոր է պատասխանել գրավոր հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում**, անկախ այն հանգամանքից՝ տնօրինո՞ւմ է հարցվող տեղեկությունը, թե ոչ, եթե, իհարկե, գրավոր հարցումը կազմված է նույն օրենքով սահմանված կարգով: Նույն 9-րդ հոդվածը սահմանում է նաեւ, որ, **եթե լրացուցիչ աշխատանք կա կատարելու տեղեկությունը**

տրամադրման նախապատրաստելու համար, ինչը հնարավոր չէ կատարել հնգօրյա ժամկետում, տեղեկություն տնօրինողը կարող է այն տրամադրել 30-օրյա ժամկետում, բայց պարտավոր է, այդ մասին հարցումն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում պատասխանով տեղեկացնել տեղեկություն որոնողին: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը տե՛ս զեկույցի **հավելված 2-ում**:

Ընդհանուր դիտարկում համայնքապետերի արձագանքների մասին

Ըստ օրենքի, նաեւ հաշվի առնելով փոստային առաքման տեւողությունը (գործնականում մինչեւ 12 օր) ՀՀ բոլոր համայնքապետերը պատասխանները պետք է ուղարկեին ԺԱԱ ամենաուշը մինչեւ 2017թ-ի մարտի 15-ը ներառյալ, իսկ հաշվի առնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ տեղեկությունների տրամադրման լրացուցիչ ժամանակ հատկացնելու նորմը (մինչեւ 30 օր), բոլոր համայնքապետերը այս հարցումներին պետք է պատասխանեին ամենաուշը մինչեւ ապրիլի 15-ը: Հաշվի առնելով հարցված տեղեկությունների մեծ ծավալը, հասկանալով, որ անհնար է հնգօրյա ժամկետում պատշաճ պատասխանել այս մոնիտորինգի շրջանակում արվող հարցմանը, եւ լրացուցիչ աշխատանք կատարելու կարիք կա հարցմանը պատասխանելու համար, արդեն հարցման մեջ նշվել էր, որ ակնկալում ենք հարցված տեղեկությունները ստանալ 30-օրյա ժամկետում եւ՝ կարիք չկա պատասխանելու հարցմանը 5-օրյա ժամկետում:

Մոտավորապես 2 տասնյակ համայնքապետարաններից հարցումն ստանալու օրը կամ հաջորդ օրը զանգել են ԺԱԱ՝ իրավախորհրդատուից պարզելու տեղեկության հարցման հանգամանքները եւ մանրամասները, եւ տեղեկացրել, որ պատրաստ են պատասխանել եւ տրամադրել հարցված տեղեկությունները:

Հարցումներին եղած արձագանքները, պատասխանները եւ պատասխանների ժամկետները հսկվել են ուշադրությամբ, եւ հարցումներին չպատասխանած համայնքապետերին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ համայնքապետարանի մեկ այլ աշխատակցի, ԺԱԱ իրավաբանը հեռախոսային զանգով հիշեցրել է իրենց հասած հարցման մասին, տեղեկացրել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանի կարգն ու ժամկետները, ապա խնդրել է հնարավորինս արագ արձագանքել հարցմանը: Բոլոր դեպքերում ԺԱԱ իրավախորհրդատուն եւ այս դիտարկման մասնագետը հեռախոսային խորհրդատվություն են իրականացրել համայնքապետերի կամ նրանց ներկայացուցիչների հետ այն մասին, թե ինչու եւ ինչպես է հարկավոր պատասխանել հարցումներին, նրանց համար լրացուցիչ մեկնաբանվել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները:

Վերլուծելով համայնքապետերի բանավոր բացատրությունները եւ մեկնաբանությունները, տեղեկության հարցումներին նրանց չպատասխանելու կամ անտեսելու պատճառները դասակարգվել են հետեւյալ խմբերում.

1. **Անուշադրություն սեփական պարտականությունների կատարման նկատմամբ.** Համայնքապետերի կամ աշխատակիցների մի մասը պնդում էր, որ արդեն ուղարկել է հարցման պատասխանը, իրավախորհրդատուի այն հարցին, թե ինչ եղանակով են ուղարկել՝ փոստո՞վ, թե՞ էլեկտրոնային եղանակով, շփոթվում են, որից հետո ընդունում

են, որ դեռ չեն ուղարկել եւ համաձայնում են պատասխանել տեղեկատվության հարցմանը: Այս խմբում բազմաթիվ են այն համայնքապետերը, որոնք շատ լավ գիտեին «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխած իրենց պարտականությունները:

2. **Խնդիրը չեն ընկալել:** Մի շարք դեպքերում բանավոր կամ գրավոր պատասխանում են, թե այս կամ այն կայքում առկա է հարցված տեղեկությունը. հաճախ համայնքապետարանի աշխատակիցները ասում են՝ «գտեք մեր կայքից», կամ՝ մարզպետարանի, արդարադատության նախարարության կայքերից: Այդ դեպքում իրենց բացատրվել է, որ պարտավոր են այդ պատասխանը գրավոր ուղարկել տեղեկությունը գրավոր հարցնողին՝ այս դեպքում ԺԱԱ, ճշգրիտ նշելով այն համացանցային հասցեները եւ հղումները, որտեղ կարելի է գտնել հարցված տեղեկությունները:

1. Վերլուծություն

1.1. Համայնքապետերի պատասխանների վերլուծությունը ըստ որակական եւ քանակական ցուցանիշների

Իրավական կարգավորումը. հարցումների պատասխան եւ տեղեկությունների տրամադրում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է.

7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

1) Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

2) Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

3) Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

8. Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը՝ սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

9. Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ ետ վերցնելով իր գրավոր հարցումը:

10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

11. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում՝ գրավոր հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

Մշտադիտարկման արդյունքը. հարցումների պատասխան եւ տեղեկությունների տրամադրում

Համադրելով մոնիտորինգային աշխատանքը, ստորեւ ամփոփված ներկայացվում են հարցումներին ստացված պատասխանների քանակական եւ որակական ցուցանիշները՝ ըստ մարզերի:

Այս զեկույցում «**լիարժեք պատասխան**» է համարվում այն պատասխանը, որում ներկայացվել են բոլոր հարցված տեղեկությունները կամ պատշաճ հղումներ են տրվել համացանցային այն աղբյուրներին, որոնցում հարցված տեղեկությունները առկա են: «**Պատշաճ հղում**» համարվում է այն հղումը, որտեղ մուտք գործելուց հետո լրացուցիչ որոնումների կարիք չկա: Այս զեկույցում «**թերի**» պատասխան համարվում է այն պատասխանը, որում հաղորդվել են հարցված ոչ բոլոր տեղեկությունները կամ տրամադրվել են ոչ պատշաճ հղումներ:

Աղյուսակ 3.
Տեղեկության հարցումներին համայնքապետերի արձագանքի որակը 26.09.2018թ-ի դրությամբ, ըստ մարզերի անվանումների այբբենական դասավորության.

	Մարզեր եւ մայրաքաղաք	Հա-մայնք-ների թիվը	Ընդամենը ստացված պատաս-խանները		Գրավոր եւ էլեկտրոնային պատասխանների թիվը եւ որակը 26.09.2018թ-ի դրությամբ				Անպատասխան հարցումների թիվը	
			հատ	%%	լիարժեք	%%	թերի	%%	հատ	%%
1	Արագածոտն	72	11	15.3%	4	5.6%	7	9.7%	61	84.7%
2	Արարատ	95	43	45.3%	27	28.4%	16	16.8%	52	54.7%
3	Արմավիր	97	28	28.9%	19	19.6%	9	9.3%	69	71.1%
4	Գեղարքունիք	57	20	35.1%	17	29.8%	3	5.3%	37	64.9%
5	Լոռի	56	51	91.1%	37	66.1%	14	25.0%	5	8.9%
6	Կոտայք	42	29	69.0%	23	54.8%	6	14.3%	13	31.0%
7	Շիրակ	42	24	57.1%	14	33.3%	10	23.8%	18	42.9%
8	Սյունիք	8	6	75.0%	5	62.5%	1	12.5%	2	25.0%
9	Վայոց Ձոր	8	7	87.5%	6	75.0%	1	12.5%	1	12.5%
10	Տավուշ	24	12	50.0%	5	20.8%	7	29.2%	12	50.0%
11	Երեւան	1	1	100.0%	1	100.0%	0	0.0%	0	0.0%
	Ընդամենը	**502**	**232**	**46.22%**	**158**	**31.47%**	**74**	**14.74%**	**270**	**53.78%**

ՀՀ ընդհանուր հաշվով, ներառյալ Երեւանը, հարցումներին պատասխանել են Հայաստանի 502 համայնքապետարաններից 232-ը (46,22%): 2017թ-ի մոնիտորինգի ընթացքում այդ ցուցանիշը 27,1% էր, իսկ 2016թ-ին՝ 36,5% էր:

Լիարժեք պատասխաններ ուղարկել են համայնքապետարանների 31,47%-ը, 2017թ-ի մոնիտորինգի ընթացքում այդ ցուցանիշը 17,5% էր, իսկ 2016թ-ին՝ 26,8% էր:

Համայնքապետերի 14,74%-ը թերի պատասխան է տվել գրավոր հարցմանը: 2017թ-ի մոնիտորինգի ընթացքում այդ ցուցանիշը 9,6% էր, իսկ 2016թ-ին՝ 9,3% էր:

2018 թվականի հարցումներին ամբողջ մոնիտորինգի ընթացքում չեն պատասխանել

Հայաստանի համայնքապետերի մոտավորապես 53,78%-ը: 2017թ-ի մոնիտորինգի արդյունքում այդ ցուցանիշը 72,9% էր, իսկ 2016թ-ին՝ 63,5%:

Աղյուսակ 4.

Համայնքապետերի արձագանքը հարցումներին 26.09.2018թ-ի դրությամբ, ըստ մարզերի, համայնքների արձագանքների ցուցանիշների՝ ակտիվ արձագանքից պասիվ արձագանք դասավորությամբ:

	Մարզեր եւ մայրաքաղաք	Հա-մայնք-ների թիվը	Ընդամենը ստացված պատասխան-ները		Գրավոր եւ էլեկտրոնային պատասխանների թիվը եւ որակը 29.09.2018թ-ի դրությամբ				Անպատասխան հարցումների թիվը	
			հատ	%%	լիարժեք	%%	թերի	%%	հատ	%%
1	Լոռի	56	51	91.1%	37	66.1%	14	25.0%	5	8.9%
2	Վայոց Ձոր	8	7	87.5%	6	75.0%	1	12.5%	1	12.5%
3	Սյունիք	8	6	75.0%	5	62.5%	1	12.5%	2	25.0%
4	Կոտայք	42	29	69.0%	23	54.8%	6	14.3%	13	31.0%
5	Շիրակ	42	24	57.1%	14	33.3%	10	23.8%	18	42.9%
6	Տավուշ	24	12	50.0%	5	20.8%	7	29.2%	12	50.0%
7	Արարատ	95	43	45.3%	27	28.4%	16	16.8%	52	54.7%
8	Գեղարքունիք	57	20	35.1%	17	29.8%	3	5.3%	37	64.9%
9	Արմավիր	97	28	28.9%	19	19.6%	9	9.3%	69	71.1%
10	Արագածոտն	72	11	15.3%	4	5.6%	7	9.7%	61	84.7%
11	Երեւան	1	1	100.0%	1	100.0%	0	0.0%	0	0.0%
	Ընդամենը	**502**	**232**	**46.2%**	**158**	**31.5%**	**74**	**14.7%**	**270**	**53.8%**

Տեղեկության հարցման մեջ խնդրանք կար՝ հնարավորության դեպքում հարցված տեղեկությունները ԺԱԱ-ին տրամադրել էլեկտրոնային տարբերակով: Արդյունքում՝ էլեկտրոնային պատասխանները բոլոր պատասխաններում մոտ 98% են:

Այս մոնիտորինգի արդյունքներով՝ 2018թ-ի սեպտեմբերի 25-ի դրությամբ, հարցումներին ամենաակտիվ արձագանքած համայնքապետարանների խումբը Լոռու մարզի համայնքապետարաններն են. **56 համայնքների 91,1%-ը պատասխանել է տեղեկության հարցմանը**, սա այս ոլորտում ԺԱԱ իրականացրած մոնիտորինգների 15-ամյա պատմության մեջ ամենաբարձր ցուցանիշն է: Լոռու մարզից հարցումներին պատասխանած 51 համայնքապետերից 37-ը (բոլոր համայնքների թվի 66,1%-ը) լիարժեք պատասխաններ է տրամադրել, 14-ը (25,0%)՝ թերի: Հարցումներին արձագանքելու բարեխղճությամբ **հաջորդում է Սյունիքի մարզը**: Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքներից 7-ի համայնքապետերը՝ 87,5%-ը, պատասխանել է հարցումներին (75%՝ լիարժեք եւ 12,5%՝ թերի պատասխաններ): **Այնուհետեւ, Կոտայքի եւ Շիրակի մարզերի համայնքապետերն են առավել պատասխանատու եղել**. Կոտայքի 42 համայնքներից 29-ն են պատասխանել հարցումներին (69%), որոնցից 54,8%-ը՝ լիարժեք պատասխան է տվել, 14,3%ը՝ թերի պատասխան, իսկ Շիրակի 42 համայնքապետերից հարցումներին պատասխանել են 24 համայնքների ղեկավարները (57,1%), որոնց 33,3%-ը՝ լիարժեք պատասխան է տվել, իսկ 23,8%-ը՝ թերի:

2017 թվականի մոնիտորինգի արդյունքներով՝ ամենաակտիվ արձագանքած համայնքապետարանների խումբը **Լոռու մարզի համայնքապետարաններն էին. դրանցից 63,6%-ը պատասխանել էին տեղեկության**

հարցմանը, որոնցից 46,7%-ը լիարժեք պատասխաններ էին տրամադրել, մոտ 16,8%-ը՝ թերի: Լոռու մարզի համայնքապետերին հարցումներին արձագանքելու բարեխղճությամբ **հաջորդում էր Շիրակի մարզը**: Շիրակի մարզի համայնքապետերի 43%-ն էր պատասխանել հարցումներին (21,5%՝ լիարժեք եւ 21,5%՝ թերի պատասխաններ), **ապա Վայոց Ձորի եւ Կոտայքի մարզի համայնքապետերն էին առավել պատասխանատու եղել**. Վայոց Ձոր՝ 37,9% (27,6%՝ լիարժեք պատասխան, 10,3%՝ թերի պատասխան), Կոտայք՝ 28,4% (25,4%՝ լիարժեք պատասխան եւ 3%՝ թերի պատասխան):

2018թ-ի մոնիտորինգի արդյունքներով, տեղեկության հարցումներին **ամենապասիվն են արձագանքել Արագածոտնի եւ Արմավիրի մարզերի համայնքները, հարցումներին պատասխանել են այդ մարզերից** համապատասխանաբար 11 եւ 28 համայնքապետեր, համայնքների ընդհանուր թվի 15,3%-ը եւ 28,9%-ը: Արագածոտնի մարզից լիարժեք պատասխան տվել է 4 համայնքապետ (5,6%), թերի պատասխան՝ 7 համայնքապետ (9,7%), իսկ Արմավիրի մարզից լիարժեք պատասխան է տվել 19 համայնքապետ (19,6%), թերի պատասխան՝ 9 համայնքապետ (9,3%):

2017 թվականի մոնիտորինգի ժամանակ տեղեկության հարցումներին **ամենապասիվն էին արձագանքել նույն Արագածոտնի եւ Արմավիրի մարզերի համայնքապետերը**՝ համապատասխանաբար 8,8% եւ 14,3%, Արագածոտնի մարզի համայնքների 4,4%-ից ստացվել էին լիարժեք պատասխաններ, այդքան էլ՝ թերի պատասխան, Արմավիրի մարզի համայնքապետարանների 3,1%-ից ստացվել էին լիարժեք պատասխաններ, եւ 11,3%-ից՝ թերի պատասխաններ:

Երեւանի համայնքապետարանը հարցմանը տրամադրել է լիարժեք պատասխան:

Պատասխանների որակի մասով համեմատություն՝ 2016 եւ 2017 թվականներին իրականացված համանման մոնիտորինգների արդյունքների հետ

Համեմատելով 2016 եւ 2017 թվականներին իրականացված համանման մոնիտորինգների արդյունքների հետ, 2018թ-ին արձանագրվել է տեղեկության հարցումներին համայնքների ղեկավարների արձագանքի աճ՝ մոտավորապես 10 եւ 20 տոկոսի չափով: Մասնավորաբար, 2016 թվականին Հայաստանի համայնքապետերի 63,5%-ն էր անպատասխան թողել համանման մշտադիտարկման շրջանակներում հղված հարցումները, 2017 թվականին՝72,89%-ը, իսկ 2018 թվականին՝ 53,78%-ը: Լիարժեք պատասխանների մասով, 2018թ-ին արձանագրվել է մոտավորապես 5 եւ 14%-ի աճ՝ 2016-ին եղել է 26,8%, 2017թ-ին՝ 17,5%, իսկ 2018թ-ին՝ 31,47%, իսկ թերի պատասխանների մասով 2018 թվականին գրանցվել է 5-ական տոկոսի աճ՝ 2016 եւ 2017 թվականների ցուցանիշների համեմատ: Այս տեղաշարժը գնահատվում է շոշափելի առաջընթաց՝ հարցումներին պատասխանելու պրակտիկայի տեսանկյունից:

Աղյուսակ 5.
ԺԱԱ հարցումներին համայնքների ղեկավարների պատասխանների որակի շարժը 2016-2018 թվականներին

Պատասխանների որակի շարժը 2016-2018 թվականներին								
Լիարժեք			Թերի			Անպատասխան		
2016	2017	2018	2016	2017	2018	2016	2017	2018
26.80%	17.50%	31.47%	9.30%	9.60%	14.74%	63.50%	72.90%	53.78%

2016-2018թթ. համեմատական շարժը ներկայացվում է կից դիագրամներում.







Համայնքների ղեկավարների պատասխանների որակները ըստ մարզերի.







Համայնքների ղեկավարների պատասխանների որակի ամփոփիչ պատկերները 2018, 2017 եւ 2016 թվականների մշտադիտարկումների արդյունքում.

2018թ-ի սեպտեմբերի 26-ի դրությամբ.



2017թ-ի օգոստոսի 15-ի դրությամբ.



2016թ-ի նոյեմբերի 5-ի դրությամբ.



Աղյուսակ 6.

Հարցումներին պատասխանած համայնքները ըստ մարզերի.

Տեղեկության հարցումներին չպատասխանած համայնքապետարանների անվանումներն աղյուսակում չկան:

	Մարզեր եւ մայրաքաղաք	**Լիարժեք պատասխաններ** ուղարկած համայնքները	**Թերի պատասխաններ** ուղարկած համայնքները
1	Արագածոտն	4 Ապարան, Թալին, Նոր Ամանոս, Սասունիկ	7 Աշտարակ, Դաշտադեմ, Փարպի, Հակկո, Ղազարավան, Շամիրամ, Օշական
2	Արարատ	27 Արաքսավան, Բուրաստան, Դարակերտ, Դարբնիկ, Զորակ, Հայանիստ, Նոր Կյանք, Նորաբաց, Շահումյան, Զրաշեն, ք. Մասիս, ք. Արտաշատ, ք. Վեդի, Այգավան, Արբաթ, Բյուրավան, Դեղձուտ, Կանաչուտ, Հնաբերդ, Հովտաշեն, Մրգանուշ, Պ.Սեւակ, Զրահովիտ, Սիս, Սիփանիկ, Վերին Դվին, ք.Արարատ	15 Ազատաշեն, Այգեստան, Այնթապ, Արգավանդ, Արմաշ, Բերքանուշ, Դաշտավան, Լանջազատ, Ղուկասավան, Նարեկ, Ուրցաձոր, Վերին Արտաշատ, Տափերական, Քաղցրաշեն, Մխչյան
3	Արմավիր	20 Ակնալիճ, Ակնաշեն, Աղավնատուն, Այգեկ, ք.Արմավիր, Արտաշար, Արեւադաշտ, Արեւիկ, Գեղակերտ, Գետաշեն, Գրիբոեդով, Էջմիածին, Լեռնագոգ, Հայկավան, Հովտամեջ, Մյասնիկյան, Մրգաշատ, Շահումյան, Փարաքար, Քարակերտ	9 Արագած, գ.Արմավիր, Բամբակաշատ, Դողս, Լենուղի, Լուսագյուղ, Մերձավան, Վարդանաշեն, Տալվորիկ
4	Գեղարքունիք	17 Գավառ, Գեղամավան, Դդմաշեն, Զովաբեր, Լանջաղբյուր, Ծաղկունք, Ծովազարդ, Կարճաղբյուր, Հայրավանք, Զորագյուղ, Նորատուս, Սարուխան, Սեմյոնովկա, Սեւան, Վաղաշեն, Վարդաձոր, Վարսեր	3 Մարտունի, Վարդենիս, Տորֆավան
5	Լոռի	37 Ազնվաձոր, Ալավերդի, Անտառաշեն, Գեղասար, Գոգարան, Գուգարք, Դարպաս, Դսեղ, Թումանյան, Լեռնանցք, Լեռնապատ, Լեռնավան, Լերմոնտովո, Լոռի Բերդ, Լուսաղբյուր, Խնկոյան, Կաթնաջուր, Հալավար, Զորագետ, Զորագյուղ, Մարգահովիտ, Շահումյան, Շենավան, Շիրակամուտ, Շնող, Չկալով, Զրաշեն, Սարահարթ, Սարչապետ, Սպիտակ, Ստեփանավան, Վահագնաձոր, Վահագնի, Վանաձոր, Տաշիր, Քարաբերդ, Օձուն	14 Անատառամուտ, Արջուտ, Արեւաշող, Բազում, Գյուլագարակ, Եղեգնուտ, Ծաղկաբեր, Փամբակ, Հարթագյուղ, Ղուրսալի, Մեծ Պառնի, Նոր Խաչակապ, Քարաձոր, Ֆիոլետովո
6	Կոտայք	23 Աբովյան, Ակունք, Առինջ, Արամուս, Բյուրեղավան, Գառնի, Դեղադիր, Եղվարդ, Ծաղկաձոր, Հացավան, Հրազդան, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Նոր Երզնկա, Նոր Հաճն, Ողջաբերդ, Պռոշյան, Չարենցավան, Զրվեժ, Վերին Պտղնի, Քաղսի, Քանաքեռավան, Քարաշամբ	6 Գեղարդ, Գետամեջ, Լեռնանիստ, Զրառատ, Մրգաշեն, Թասախ

7	Շիրակ	14 Առափի, Աշոցք, Արթիկ, Բայանդուր, Բենիամին, Գյումրի, Երազգավորս, Հայկավան, Հայրենյաց, Հովտաշեն, Նահապետավան, Պեմզաշեն, Սարալանջ, Սպանդարյան	9 Արեւշատ, Անուշավան, Հայկասար, Հառիճ, Հոռոմ, Մեծ Մանթաշ, Մեղրաշեն, Տուֆաշեն, Սարատակ, Մարալիկ՝ Անի
8	Սյունիք	6 Գորիս, Գորայք, Քաջարան,Կապան, Մեղրի, Տեղ	1 Սիսիան
9	Վայոց Ձոր	6 Արենի, Գլաձոր, Եղեգնաձոր, Մալիշկա, Ջերմուկ, Վայք	1 Եղեգիս
10	Տավուշ	6 Այգեհովիտ, Բերդ, Դիլիջան, Դիտավան, Նոյեմբերյան, Վազաշեն	7 Ներքին Ծաղկավան, Ակնաղբյուր, Այրում, Գանձաքար, Լուսահովիտ, Կողբ, Սարիգյուղ
11	Երեւան	Երեւան	-

1.2. Ստացված պատասխանների վերլուծությունը՝ ըստ օրենքով նախատեսված ժամկետի համապատասխանության

Իրավական կարգավորումը ներկայացված է այս զեկույցի 1.1 բաժնում:

Մշտադիտարկման արդյունքը. պատասխանի ժամկետներ

Այս մշտադիտարկման ընթացքում համայնքապետերին հղված տեղեկության հարցումների նախաբանում նշվում էր, թե **«…հաշվի առնելով, որ ներքոհիշյալ հարցվող տեղեկությունները ծավալուն են եւ օրենքով սահմանված 5 օրը բավարար չէ դրանք տրամադրելու համար, ակնկալում եմ այդ տեղեկությունները Ձեզնից ստանալ 30-օրյա ժամկետում»**: Ըստ այդմ, ստորեւ բերված վերլուծությունում «օրենքով սահմանված ժամկետում տրամադրված տեղեկություններ» ձեւակերպումը ենթադրում է, որ տեղեկություններն ԺԱԱ է ուղարկվել հարցումն համայնքապետարանում ստացվելուց հետո 30-օրյա ժամկետում, իսկ «օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ տրամադրված տեղեկություններ» ձեւակերպումը ենթադրում է, որ հարցված տեղեկությունները ԺԱԱ են ուղարկվել հարցումն համայնքապետարանում ստացվելուց հետո 30-օրյա ժամկետից անց:

2018 թվականի հարցումներին **օրենքով սահմանված ժամկետում** պատասխանել է Հայաստանի համայնքների 22,9%-ը: 2017թ-ին այդ ցուցանիշը եղել է 21,4%, իսկ 2016 թվականին՝ 15,2%: 2018 թվականի հարցումներին **օրենքով սահմանված ժամկետից ուշ** պատասխանել է Հայաստանի համայնքների 23,3%-ը: 2017թ-ին այդ ցուցանիշը եղել է 5,7%, իսկ 2016 թվականին՝ 21,3%:

2018 թվականի հարցումներին ամբողջ մոնիտորինգի ընթացքում **չի պատասխանել** Հայաստանի համայնքապետերի մոտավորապես 53,78%-ը: 2017թ-ի մոնիտորինգի արդյունքում այդ ցուցանիշը 72,9% էր, իսկ 2016թ-ին՝ 63,5% էր:

2017 թվականի մոնիտորինգի արդյունքում, համայնքներից միայն 170 (21,4%)-ն էին պատասխանել հարցումներին՝ 30-օրյա ժամկետում, 45-ը (5,7%) պատասխանել էին ուշացումով, իսկ մնացած 578-ը (72,9%) չի պատասխանել հարցմանը:

2016 թվականին իրականացված մոնիտորինգի ընթացքում օրենքով նախատեսված ժամկետում պատասխանել էին համայնքապետերի 15,2%-ը, 30-օրյա ժամկետի պահանջի խախտմամբ՝ ուշացումով պատասխանել էր 21,3%-ը, հարցումներին չէր պատասխանել համայնքապետերի 63,5%-ը:

Աղյուսակ 7.
ԺԱԱ հարցումներին համայնքների ղեկավարների պատասխանների ժամկետների համեմատությունը 2016 եւ 2017 թվականների համանման մոնիտորինգի արդյունքների հետ:

Պատասխանների որակի շարժը 2016-2018 թվականներին								
30-օրյա ժամկետում			30-օրյա ժամկետի խախտմամբ			Անպատասխան		
2016	2017	2018	2016	2017	2018	2016	2017	2018
15.20%	21.4%	22.9%	21.30%	5.7%	23.3%	63.50%	72.90%	53.78%

2016-2018թթ շարժը ներկայացվում է հարակից գծապատկերներում.





2018 թվականի մոնիտորինգի նախնական արդյունքների համաձայն, ըստ գրավոր հարցումների պատասխանների ժամանակային վիճակագրության, օրենքով սահմանված ժամկետում տրված պատասխանների ծավալով, մարզային հաշվարկով **ամենաբարեխիղճը եղել են Վայոց Ձորի մարզի համայնքների՝ 50%-ը,** ժամկետանց պատասխանները՝ 37,5%, հարցումն անպատասխան են թողել համայնքապետերի 12,5%-ը: Ժամկետային բարեխղճությամբ Վայոց Ձորի մարզին **հաջորդում է Լոռու մարզը՝ 46,43%** (56 համայնքից՝ 26-ը), ժամկետանց պատասխանները՝ 44,46%, հարցումն անպատասխան է թողել 8,93% ը, **ապա՝ Սյունիքի եւ Տավուշի մարզերը՝ 37,5-ական տոկոս**:

2017թ-ի մոնիտորինգի արդյունքներով, օրենքով սահմանված ժամկետում տրամադրված տեղեկությունների ծավալով մարզային հաշվարկով **ամենաբարեխիղճն էին Լոռու մարզի համայնքները՝ 50,5%-ը** (2016թ-ին՝ 31,8%), ժամկետանց պատասխանները՝ 13,1% (2016թ-ին՝ 47,7%), հարցումն անպատասխան էր թողել համայնքապետերի 36,4%-ը: Ժամկետային բարեխղճությամբ **Լոռու մարզին հաջորդում էին Վայոց Ձորի մարզը՝ 37,9%** (ժամկետանց պատասխաններ չկային, հարցումն անպատասխան էր թողել համայնքապետերի 62,1%-ը), **ապա Շիրակի մարզը՝ 30,4%** (ուշացումով՝ 12,5%, անպատասխան՝ 57,0%):

2018թ-ի մոնիտորինգի նախնական արդյունքներով, օրենքով նախատեսված ժամկետում պատասխանելու տեսանկյունից **ամենացածր ցուցանիշներն ունեն Արագածոտնի մարզը՝ 4,7%** (ժամկետանց պատասխաններ՝ 11,11%, անպատասխան՝ 84,72%), ապա **Արմավիրի մարզը՝ 10,31%** (ժամկետանց պատասխաններ՝ 18,56%, անպատասխան՝ 71,13%), **հետո Շիրակի մարզը՝ 19,05%** (ժամկետանց պատասխաններ՝ 38,1%, անպատասխան՝ 42,86%):

2017թ-ի մոնիտորինգի արդյունքներով, օրենքով նախատեսված ժամկետում պատասխանելու տեսանկյունից **ամենացածր ցուցանիշն ուներ Արագածոտնի մարզը՝ 7,0%** (ժամկետանց պատասխաններ՝1,8%, անպատասխան՝ 91,2%), ապա **Արմավիրի մարզը՝ 12,4%** (ժամկետանց պատասխաններ՝ 2,1%, անպատասխան՝ 85,6%), **հետո Արարատի մարզը՝ 12,6%** (ժամկետանց պատասխաններ՝ 6,3%, անպատասխան՝ 81,1%):

Երեւանի համայնքապետարանը հարցմանը պատասխանել են 30-օրյա ժամկետում:

Մանրամասները ներկայացված են 7-րդ աղյուսակում եւ հարակից դիագրամներում.

Աղյուսակ՝ 8.
Հարցումների պատասխաններն ըստ ժամկետի, 2018թ.

##	մարզեր եւ մայրաքաղաք	հարցում-ների թիվը	օրենքով սահմանված ժամկետում տրամադրված տեղեկություններ		օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ տրամադրված տեղեկություններ		անպատասխան հարցումների թիվը	
			Համայնք	%%	Համայնք	%%	Համայնք	%%
1	Արագածոտն	72	3	4.17%	8	11.11%	61	84.72%
2	Արարատ	95	24	25.26%	19	20.00%	52	54.74%
3	Արմավիր	97	10	10.31%	18	18.56%	69	71.13%
4	Գեղարքունիք	57	11	19.30%	9	15.79%	37	64.91%
5	Լոռի	56	26	46.43%	25	44.64%	5	8.93%
6	Կոտայք	42	16	38.10%	13	30.95%	13	30.95%
7	Շիրակ	42	8	19.05%	16	38.10%	18	42.86%
8	Սյունիք	8	3	37.50%	3	37.50%	2	25.00%
9	Վայոց Ձոր	8	4	50.00%	3	37.50%	1	12.50%
10	Տավուշ	24	9	37.50%	3	12.50%	12	50.00%
11	Երեւան	1	1	100.00 %	0	0.00%	0	0.00%
	Ընդամենը	**502**	**115**	**22.91%**	**117**	**23.31%**	**270**	**53.78%**

Համայնքների ղեկավարների պատասխանների ժամկետների ամփոփիչ պատկերները 2018, 2017 եւ 2016 թվականների մշտադիտարկումների արդյունքում.

2018թ-ի սեպտեմբերի 25-ի դրությամբ.



2017 թ. օգոստոսի 15-ի դրությամբ.

2016թ-ի նոյեմբերի 5-ի դրությամբ.



Աղյուսակ 9.

30-օրյա ժամկետում եւ ավելի ուշ հարցումներին պատասխանած համայնքապետարաններն ըստ մարզերի: Տեղեկության հարցումներին չպատասխանած համայնքների անվանումներն աղյուսակում չկան:

	Մարզեր եւ մայրաքաղաք	Հարցումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում պատասխանած համայնքապետարանները	Հարցումն ստանալուց հետո 30-օր անց պատասխանած համայնքապետարանները
1	Արագածոտն	11 Ապարան, Աշտարակ, Դաշտադեմ, Փարպի, Թալին, Հակկո, Ղազարավան, Նոր Ամանոս, Շամիրամ, Սասունիկ, Օշական	0
2	Արարատ	39 Ազատաշեն, Այգավան, Այգեստան, Այնթապ, Արաքսավան, Արբաթ, Արգավանդ, Արմաշ, Բերքանուշ, Բյուրավան, Բուրաստան, Դաշտավան, Դարակերտ, Դարբնիկ, Դեղձուտ, Զորակ, Լանջազատ, Հայանիստ, Կանաչուտ, Հնաբերդ, Հովտաշեն, Միխչյան,Մրգանուշ, Ղուկասավան, Նոր Կյանք, Նորաբաց, Ուրցաձոր, Ջրաշեն, Տափերական, ք. Մասիս, ք.Արարատ, ք. Արտաշատ, ք. Վեդի,	3 Նարեկ, Շահումյան, Վերին Դվին

		Քաղցրաշեն, Պ.Սեւակ, Ջրահովիտ, Սիս, Սիփանիկ , Վերին Արտաշատ	
3	Արմավիր	26 Ակնալիճ, Ակնաշեն, Այգեկ, Արագած, ք.Արմավիր, գ.Արմավիր, Արտաշար, Արեւադաշտ, Արեւիկ, Բամբակաշատ, Գեղակերտ, Գետաշեն, Գրիբոյեդով, Լեռնագոգ, Լուսագյուղ, Հայկավան, Հովտամեջ, Մերձավան, Դողս, Էջմիածին, Լենուղի, Վարդանաշեն, Տալվորիկ, Մրգաշատ, Շահումյան, Փարաքար	3 Աղավնատուն, Մյասնիկյան, Քարակերտ
4	Գեղարքունիք	20 Գավառ, Գեղամավան, Դդմաշեն, Ջովաբեր, Մարտունի, Լանջաղբյուր, Ծաղկունք, Կարճաղբյուր, Հայրավանք, Ջորագյուղ, Մարտունի, Նորատուս, Սարուխան, Սեմյոնովկա, Սեւան, Վաղաշեն, Վարդաձոր, Վարդենիս, Վարսեր, Տորֆավան	1 Ծովազարդ
5	Լոռի	31 Անտառամուտ, Անտառաշեն, Արջուտ, Բազում, Գեղասար, Գյուլագարակ, Գուգարք, Դարպաս, Դսեղ, Թումանյան, Լեռնանցք, Լեռնապատ, Լերմոնտովո, Լոռի Բերդ, Ծաղկաբեր, Խնկոյան, Կաթնաջուր, Հարթագյուղ, Ջորագետ, Ղուրսալի, Մարգահովիտ, Շահումյան, Շենավան, Սպիտակ, Ստեփանավան, Վահագնաձոր, Վահագնի, Վանաձոր, Տաշիր, Քարաձոր, Ջրաշեն	20 Արեւաշող, Լուսաղբյուր, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ, Օձուն, Ֆիոլետովո, Ազնվաձոր, Ալավերդի, Գոգարան, Եղեգնուտ, Լեռնավան, Հալավար, Ջորագյուղ, Շիրակամուտ,Շնող, Չկալով, Սարահարթ, Սարչապետ, Փամբակ, Քարաբերդ
6	Կոտայք	22 Աբովյան, Արամուս, Բյուրեղավան, Գառնի, Գեղադիր, Գետամեջ, Լեռնանիստ, Ծաղկաձոր, Հացավան, Մրգաշեն, Հրազդան, Նոր Երզնկա, Նոր Հաճն, Ողջաբերդ, Պառոշյան, Չարենցավան, Ջրառատ, Ջրվեժ, Վերին Պտղնի, Քասախ, Քաղսի, Քանաքեռավան	7 Եղվարդ, Ակունք, Առինջ, Գեղարդ, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Քարաշամբ
7	Շիրակ	16 Առափի, Արթիկ, Արեւշատ, Անուշավան, Բայանդուր, Հայկասար, Հայկավան, Մեղրաշեն, Գյումրի, Տուֆաշեն, Հոռոմ, Նահապետավան, Պեմզաշեն, Սարալանջ, Սարատակ, Սպանդարյան	8 Աշոցք, Հայրենյաց, Հառիճ, Բենիամին, Երազգավորս, Հովտաշեն, Մարալիկ՝Անի, Մեծ Մանթաշ
8	Սյունիք	3 Կապան, Մեղրի, Տեղ	4 Գորիս, Սիսիան, Գորայք Քաջարան
9	Վայոց Ձոր	4 Եղեգիս, Եղեգնաձոր, Ջերմուկ, Գլաձոր	3 Վայք, Արենի, Մալիշկա
10	Տավուշ	12 Ներքին Ծաղկավան, Ակնաղբյուր,Այգեհովիտ, Այրում, Բերդ, Գանձաքար, Լուսահովիտ, Կողբ, Նոյեմբերյան, Սարիգյուղ, Դիտավան, Վազաշեն	1 Դիլիջան
11	Երեւան	Երեւան	-

1.3. Հանրային քննարկումների կամ լսումների պրակտիկայի վերլուծություն

Մշտադիտարկման այս բաժնում նպատակ է եղել պարզելու, թե Հայաստանի համայնքները 2016 թվականին ինչպես են կատարել հանրային քննարկումներ կամ լսումներ կազմակերպելու եւ անցկացնելու՝ օրենքով իրենց ունեցած պարտականությունները:

Իրավական կարգավորումը 2017 թվականի ընթացքում. հանրային քննարկումներ կամ լսումներ

Իրավական կարգավորումը ՏԻՄ-երի համար.

1. Մինչեւ 2016թ-ի դեկտեմբերի 31-ը ուժի մեջ եղած «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54.1-ին հոդվածի համաձայն (Համայնքի զարգացման ծրագրի եւ բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունը) ... հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման եւ դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը սահմանում է համայնքի ավագանին:
2. ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 69-րդ հոդվածի համաձայն (Համայնքի բյուջեի կատարման հաշվետվության հաստատումը), համայնքի ղեկավարը մինչեւ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում եւ անցկացնում է հանրային բաց լսումներ եւ (կամ) քննարկումներ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով սահմանված ժամկետում: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված եւ ընդունված դիտողությունների եւ առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն:
3. ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի 27.1 հոդվածի 4-րդ կետի համաձայն (Իրավական ակտի կարգավորման ազդեցության գնահատումը), ... 4. Նախագիծ մշակող մարմինը նորմատիվ իրավական ակտի նախագիծը ազդեցության գնահատողներին ներկայացնելու հետ մեկտեղ կազմակերպում է նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ, որոնց նպատակը նորմատիվ իրավական ակտի նախագծի մասին ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրազեկումն է, ինչպես նաեւ նրանցից կարծիքների հավաքումն ու դրանց հիման վրա նորմատիվ իրավական ակտի նախագծի անհրաժեշտ լրամշակման աշխատանքների իրականացումը:

Ծանոթություն.
Համայնքների համար ՀաՄաՏեղ ծրագրի շրջանակներում Հայաստանի ֆինանսիստների միավորումը 2015թ-ին մշակել է «Համայնքի տարածքում հանրային քննարկումների եւ (կամ) լսումների կազմակերպման եւ անցկացման կարգը», որը ՏԿԶՆ-ի կողմից տրամադրվել է ՀՀ բոլոր համայնքների ղեկավարներին, որպեսզի ներկայացնեն ավագանիների քննարկմանը եւ հաստատմանը: ՀՀ համայնքների ճնշող մեծամասնությունը իր համար հաստատել է այդ կարգը:

Մշտադիտարկման արդյունքը. հանրային լսումներ

Այս մշտադիտարկման շրջանակներում Հայաստանի բոլոր 502 համայնքների ղեկավարներին հղված տեղեկությունների հարցումներին պատասխանել էր 232 ղեկավար, որոնցից միայն 173-ն է պատասխանել հանրային լսումների մասին հարցերին: Պատասխանների ամփոփագիրը ներկայացվում է ստորեւ՝ 10-12-րդ աղյուսակներում:

Աղյուսակ 10.

Հանրային քննարկումների կամ լսումների կազմակերպումների մասին 135 համայնքների ղեկավարների պատասխանների ամփոփագիրն ըստ մարզային ընդհանրացումների.

Մարզեր	Համայնք-ների թիվը	Տեղեկու-թյան հարցում-ներին պատաս-խանել են	7. Քանի՞ հանրային լսում կամ քննարկում է կազմակերպվել եւ անցկացվել համայնքում 2017 թվականի ընթացքում:	7.1. Ե՞րբ են տեղի ունեցել դրանք	7.2. Ի՞նչ եղանակ-ներով է հանրությունը իրազեկվել դրանց մասին	7.3. Քանի՞ հոգի է մասնակցել դրանցից յուրաքան-չյուրին	7.4. Համայնքի ավագանուն տրամադրվե՞լ է արդյոք տեղեկատվու-թյուն դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ
Արագածոտն	72	11	3	3 համայնքա-պետ նշել է ժամկետներ ը	Ցուցատախտ ակներով, հայտարարու թյուններով, կայք էջերով	15-100	3 համայնքում:
Արարատ	95	42	28 համայնքի ղեկավար է պատասխանել այս հարցին: Նրանցից 1-ը (Նորաբացը) տեղեկացրել է, որ որեւէ հանրային լսում չի անցկացվել իրենց համայնքում 2017 թ.: 17 համայնքապետերը տեղեկացրել են, որ իրենց համայնք-ներում անցկացվել է ընդհանուր առմամբ 68 հանրային լսում: 7-ը չեն պատաս-խանել այս հարցին	27 համայնքա-պետ նշել է Ժամկետներ ը,	22-ը՝ ցուցատախ-տակներով, 4-ը՝ նաեւ կայքով 1-ը թերթով 2-ը բերանացի, 3-ը՝ Ֆեյսբուքյան էջով, 3-ը պաշտոնակա ն կայքէջով	Շահագրգի ռ անձինք, աշխատակ ազմը, 12-ը պատախա նել են՝ 5-470 հոգի (Դարա-կերտ՝ 245-317, Նոր Խարբերդ՝ 380-400), Բուրաստ ան (470),	1 համայնքում:
Արմավիր	97	29	10 պատասխանել են, իսկ 10-ը չեն պատասխանել այս հարցին:	9համայնքա-պետ նշել է ժամկետներ ը	7-ը՝ ցուցանակով, 1-ը նաեւ Ֆեյսբուքյան էջով,2-ւ պաշտոնակա ն կայք էջով, 1-ն էլ միայն ֆեյսբուքյան էջով	20-25	9 համայնքում:

Մարզեր	Համայնք-ների թիվը	Տեղեկու-թյան հարցում-ներին պատաս-խանել են	7. Քանի՞ հանրային լսում կամ քննարկում է կազմակերպվել եւ անցկացվել համայնքում 2017 թվականի ընթացքում:	7.1. Ե՞րբ են տեղի ունեցել դրանք	7.2. Ի՞նչ եղանակ-ներով է հանրությունը իրազեկվել դրանց մասին	7.3. Քանի՞ հոգի է մասնակցել դրանցից յուրաքան-չյուրին	7.4. Համայնքի ավագանուն տրամադրվե՞լ է արդյոք տեղեկատվու-թյուն դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ
Գեղարքունիք	57	20	9 համայնքում ընդամենը 25 քննարկում է եղել, 2-ը չեն պատասխանել այս հարցին, 9-ը պատասխանել են, որ իրենց համայնքում հանրային քննարկում տեղի չի ունեցել	8 համայնքա-պետ նշել է ժամկետներ ը:	7-ը՝ ցուցատախ-տակներով, 4-ը՝ նաեւ կայքով, մեկը՝ Սեւանը, նաեւ հեռուստա-տեսությամբ:	9-ը պատաս-խանել են՝ 10-50 հոգի,	8 համայնքում:
Լոռի	57	51	39 համայնքում քննարկում է եղել, 4-ում չի անցկացվել, 9-ը չեն պատասխանել այս հարցին:	34 համայնքա-պետ նշել է ժամկետներ ը:	33-ը՝ ցուցատախ-տակներով, 4-ը նաեւ ֆեյսբուքյան էջով, 2-ը՝ պաշտոնակա ն կայքով, 1-ը (Անատառամո ւտը)՝ միայն բանավոր:	Բազումը եւ Նոր Խաչակապ ը այս հարցին չեն պատասխ անել, 31-ը պատաս-խանել են՝ 5-300 հոգի,	Միայն 37 համայնքում, 2-ը չեն պատասխանե լ այս հարցին:
Կոտայք	42	29	18 համայնքապետ է պատասխանել այս հարցին, 8-ը նշել են, որ իրենց համայնքում հանրային լսումներ 2017 թ. չեն անցկացվել, 3-ը չեն պատասխանել այս հարցին:	18 համայնքա-պետ նշել է ժամկետներ ը	17-ը՝ ցուցատախ-տակներով, 9-ը՝ նաեւ կայքով, Զրվեժը՝ նաեւ ՀՀ օրաթերթով, Հրազդանը՝ համացանցով:	Լեռնանիս տում՝ 326, իսկ մնացած 17 համայնք-ներում՝ 10-103 մասնակից:	Միայն 18 համայնքում:
Շիրակ	42	22	12 համայնքապետ է պատասխանել այս հարցին, 4-ը նշել է, որ իրենց համայնքում հանրային լսում 2017 թ. չի անցկացվել, 6-ը չի պատասխանել այս հարցին:	11 համայնքա-պետ նշել է Ժամկետներ ը: 1-ը չի պա-տասխանել:	9-ը՝ ցուցա-տախտակ-ներով, 2-ը՝ նաեւ կայքով, Արթիկը՝ նաեւ «Տուֆ աշխարհը» թերթով: Գյումրին՝ «Շանթ» ՀՌԸ, պաշտոնակա ն կայք էջով:	Առափին ու Հայկավան ը նշել են շահագրգի ռ անձինք: Մեղրաշեն ը եւ Անու-շավանը, այս հար-ցին չեն պատասխ անել, մնացածը նշել են 10-60 անձ:	10 համայնքում, 2-ը չի պատասխանե լ այս հարցին:

Մարզեր	Համայնք-ների թիվը	Տեղեկու-թյան հարցում-ներին պատաս-խանել են	7. Քանի՞ հանրային լսում կամ քննարկում է կազմակերպվել եւ անցկացվել համայնքում 2017 թվականի ընթացքում:	7.1. Ե՞րբ են տեղի ունեցել դրանք	7.2. Ի՞նչ եղանակ-ներով է հանրությունը իրազեկվել դրանց մասին	7.3. Քանի՞ հոգի է մասնակցել դրանցից յուրաքան-չյուրին	7.4. Համայնքի ավագանուն տրամադրվե՞լ է արդյոք տեղեկատվու-թյուն դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ
Սյունիք	8	7	7 համայնքում	6 համայնքա-պետ նշել է Ժամկետներ ը, 1-ը չի պա-տասխանել	5-ը՝ ցուցատախ-տակներով, 4-ը՝ նաեւ կայքէջով, 2-ը միայն պաշտոնակա ն կայք էջով, Կապանում՝ նաեւ հեռուստա-տեսությամբ եւ ՀՀ օրաթերթով, Մեղրիում նաեւ համայնքի հրապարակի էկրանով	4-ը պատաս-խանել են՝ 18-60 հոգի: Մյուսները չեն պա-տասխանե լ այս հարցին:	Միայն 6 համայնքում, 1-ը չի պատասխանե լ այս հարցին:
Վայոց Ձոր	8	7	6 համայնքապետ է պատասխանել այս հարցին,: 1-ը չի պատասխանել այս հարցին:	Միայն 4համայնքա-պետ նշել է ժամկետներ ը, 2-ը չեն պատասխա նել այս հարցին:	6-ը՝ ցուցա-տախտակ-ներով, 2-ը՝ նաեւ կայքէջով, 1-ը՝ նաեւ ԶԼՄ-ով, 1-ը՝ նաեւ հեռախոսա-զանգով:	Արենի 375-400 մարդ է մասնակցե լ, մնացածու մ՝ 11-100 :	6համայնքներ ում:
Մարզեր	Համայնք-ների թիվը	Տեղեկու-թյան հարցում-ներին պատաս-խանել են	7. Քանի՞ հանրային լսում կամ քննարկում է կազմակերպվել եւ անցկացվել համայնքում 2017 թվականի ընթացքում:	7.1. Ե՞րբ են տեղի ունեցել դրանք	7.2. Ի՞նչ եղանակ-ներով է հանրությունը իրազեկվել դրանց մասին	7.3. Քանի՞ հոգի է մասնակցել դրանցից յուրաքան-չյուրին	7.4. Համայնքի ավագանուն տրամադրվե՞լ է արդյոք տեղեկատվու-թյուն դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ
Տավուշ	24	13	4 համայնքապետ է պատասխանել այս հարցին, որից 3-նշել են, որ իրենց համայնքում հանրային լսումներ 2017թ. չի անցկացվել, 6-ը չի պատասխանել այս հարցին: Բերդի համայնքա-պետը հղում է	3 նշել են Ժամկետներ ը: մյուսնը չի նշել:	4-ը՝ ցուցատախ-տակներով:	25-60 հոգի:	Միայն 3 համայնքում:

			կատարել համայնքային կայքէջին, որում այդ տեղեկություն-ները չկան:				
Երեւան	1	1	8 հանրային լսում է անցկացվել:	Ժամկետներ ը նշել են պատասխա-նում:	Համայնքապե-տարանի պաշտոնա-կան կայքէջով եւ համացանցով	Պատասխ անում նշել են՝ ավագանու անդամներ ը	Ավագանուն տեղեկատվու-թյուն տրամադրվել է հանրային լսումների մասին:
Ընդամենը	502	295					

Աղյուսակ 11.
Համայնքային հանրային քննարկումների կամ լսումների վիճակագրությունն ըստ համայնքների ղեկավարների պատասխանների.

##	Մարզեր եւ մայրաքաղաք	Համայն քների թիվը	Պատաս խանել է հարցու մներին	Չի պատաս խանել հարցու մներին	Քանի համայն-քում է հանրային լսում անցկաց-վել	Քանի հանրայ ին լսում է անցկաց -վել	Միջին հաշվով՝ հանրայ ին լսումնե ր/համայ նք	Քանի համայն-քում հանրային լսում չի անցկաց-վել	Անհայտ է՝ հանրային լսում անցկաց-վել է, թե ոչ	Քանի համայն-քում է ավագա-նուն տեղեկու-թյուն հաղորդվել հանրային լսումների մասին
1	Արագածոտն	72	11	61	4	8	2	0	68	4
2	Արարատ	95	43	52	28	68	2.4	4	67	27
3	Արմավիր	97	28	69	10	14	1.4	8	87	9
4	Գեղարքունիք	57	20	37	9	25	2.8	9	48	8
5	Լոռի	57	51	6	38	120	3.2	3	19	37
6	Կոտայք	42	29	13	18	44	2.4	8	24	18
7	Շիրակ	41	24	17	11	24	2.2	4	30	10
8	Սյունիք	8	6	2	6	37	6.2	0	2	5
9	Վայոց Ձոր	8	7	1	6	18	3.0	0	2	6
10	Տավուշ	24	12	12	4	6	1.5	2	20	3
11	Երեւան	1	1	0	1	8	8.0	0	0	1
	Ընդամենը	**502**	**232**	**270**	**135**	**372**	**2.8**	**38**	**367**	**128**

Աղյուսակ 12.
Այն համայնքների ցանկը, որոնք, ըստ համայնքի ղեկավարի պատասխանի, հանրային լսումներ չեն անցկացրել.

##	Մարզեր եւ մայրաքաղաք	Համայնքը
1	Արագածոտն	-
2	Արարատ	4 Արբաթ, Նորաբաց, Զրահովիտ, Վերին Դվին
3	Արմավիր	9 Ակնաշեն, Արմավիր, Արտաշար, Արեւադաշտ, Գեղակերտ, Լեռնագոգ, Հովտամեջ, Մրգաշատ, Շահումյան
4	Գեղարքունիք	9 Գեղամավան, Դդմաշեն, Զովաբեր, Լանջաղբյուր, Հայրավանք, Զորագյուղ, Վաղաշեն, Վարդաձոր, Վարսեր
5	Լոռի	4 Կաթնաջուր, Հարթագյուղ, Մարգահովիտ, Քարաբերդ
6	Կոտայք	8 Մրգաշեն, Նոր Հաճն, Ողջաբերդ, Չարենցավան, Պռոշյան, Զրառատ, Քաղսի, Քարաշամբ
7	Շիրակ	4 Բայանդուր, Հայրենյաց, Նահապետավան, Պեմզաշեն
8	Սյունիք	-
9	Վայոց Ձոր	-
10	Տավուշ	3 Այգեհովիտ, Գանձաքար, Վազաշեն
11	Երեւան	

Ամփոփելով 2017թ-ի ընթացքում անցկացված հանրային լսումների մասին համայնքների ղեկավարների տրամադրած տեղեկությունները, ակնհայտ է դառնում, որ դրանց մասով սեփական լիազորությունները եւ պարտականությունները Հայաստանի համայնքապետերի զգալի մասը թերակատարում է: Մասնավորաբար, հարցումներին 502 համայնքապետից պատասխանած 232 (46,21%) **համայնքների ղեկավարներից միայն 135-ն է** (պատասխանողների 58,18-ը եւ բոլոր համայնքապետերի 26,89%-ը) **որեւէ տեղեկություն հաղորդել համայնքային հանրային լսումների մասին**:

> 2017թ-ի համանման մոնիտորինգի ընթացքում 2016թ-ին անցկացված հանրային լսումների մասին հարցերին 793 համայնքապետից պատասխանել էին միայն 215-ը (27,1%), իսկ նրանցից **միայն 125-ն էր (պատասխանողների 58,1%-ը եւ բոլոր համայնքապետերի 15,7%-ը) որեւէ տեղեկություն հաղորդել համայնքային հանրային լսումների մասին**:

Ենթադրվում է, որ հարցումներին պատասխանած եւ այլ տեղեկություններ հաղորդած մյուս 97 համայնքապետերը իրենց համայնքներում կամ հանրային լսումներ չեն անցկացրել, կամ դրանք անցկացրել են այնպես, որ որեւէ արձանագրային կամ վիճակագրական տեղեկություն չեն տնօրինում դրանց մասին: **Այս պատկերը վկայում է համայնքների ղեկավարների ճնշող մեծամասնության անուշադրությունը սեփական պարտականություններից այս մեկի նկատմամբ: Այս համայնքների ղեկավարները գրեթե չեն կարեւորում համայնքի զարգացման ծրագրի եւ բյուջեի մասին հասարակության կարծիքն ու մոտեցումները:**

Դիագրամում ներկայացված է 2017թ-ին համայնքներում անցկացված հանրային լսումների վիճակագրությունն ըստ համայնքների ղեկավարներից ստացված տեղեկությունների.

2017թ-ին Հայաստանի համայնքներում հանրային լսումների պատկերը, ըստ համայնքապետերի տրամադրած տեղեկությունների.



1.4. Հանրությանը ՏԻՄ-երի կողմից ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունների պաշարի պրոակտիվ տրամադրման իրավիճակի վերլուծությունը ըստ համայնքապետերի պատասխանների

Իրավական կարգավորումը. տեղեկությունների հրապարակում

Ըստ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի ՏԻՄ-երը պարտավոր են տարեկան առնվազն մեկ անգամ հրապարակել իրենց տնօրինած տեղեկությունների հստակ ծավալ, իսկ այդ տեղեկություններից որեւէ մեկի փոփոխվելուց հետո՝ 10-օրյա ընթացքում, հրապարակել փոփոխված տեղեկությունները: Ըստ օրենքի այդ տեղեկություններն են.

1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները,
2) բյուջեն,
3) գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
4) հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը,
6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
7) հասարակական միջոցառումների ծրագրերը,
8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
10) տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը.
11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը,
12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.
13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

Մշտադիտարկման արդյունքը. տեղեկությունների հրապարակում

Մշտադիտարկման խնդիրներից մեկն է եղել՝ պարզել, թե ՀՀ համայնքապետերը որքանով են իրականացնում ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրենց պարտականությունները. հրապարակո՞ւմ են արդյոք տեղեկություններ ՏԻՄ-երի կողմից հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) ծրագրերի, աշխատանքների եւ ծառայությունների մասին, այդ թվում համայնքի զարգացման ծրագրի եւ բյուջեի մասին, ինչպես նաեւ ՏԻՄ-երին հղվելիք գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները, համայնքի պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները, համայնքի աշխատակազմում աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը, շրջակա միջավայրի վրա

համայնքապետարանի ներգործությունը, համայնքում հասարակական միջոցառումների ծրագրերը, համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների մոտ քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը, վայրը եւ այլն: (ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը տես այս զեկույցի հավելված 2-ում):

Դա պարզելու համար, համայնքապետերին հղված տեղեկության հարցումներում ներառվել է մի քանի հարց, որոնք օրենքով նախատեսված տեղեկությունների վերաձեւակերպումներն են ՏԻՄ-երի համար: Այդ հարցերն են.

1. ... 8. 2017թ-ի ընթացքում արդյո՞ք հրապարակել եք հետեւյալ տեղեկությունները, որոնց տարին առնվազն մեկ անգամ հրապարակումը նախատեսված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով, եթե այո, ապա որտե՞ղ եւ ե՞րբ.
    1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները,
    2) բյուջեն,
    3) գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
    4) հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
    5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը,
    6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
    7) հասարակական միջոցառումների ծրագրերը,
    8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
    9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
    10) տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,
    11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը,
    12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները,
    13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

Համայնքապետերի պատասխաններն ի մի են բերվել 12-րդ աղյուսակում: Հարկավոր է հաշվի առնել, որ այս ամփոփագիրը կազմված է միայն հարցումներին ստացված պատասխաններից: Հարցումներին օրենքի խախտմամբ չպատասխանած համայնքապետարաններում այս մշտադիտարկման շրջանակներում այլ ուսումնասիրություն չի իրականացվել եւ անհնար է ասել, արդյո՞ք ՀՀ այդ 270 (ՀՀ բոլոր համայնքների 53,78%-ը) համայնքներում իրականացվում է ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող տեղեկությունների պրոակտիվ հրապարակումը:

Աղյուսակ 13.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված տեղեկությունների հրապարակման պահանջի կատարման որակը (պրոակտիվ հրապարակումներ), ըստ համայնքապետերի պատասխանների, **2018 թ., սեպտեմբերի 25**

	Մարզեր եւ մայրաքաղաք	Հարցում ստացած համայնք-ների թիվը	Հարցմանը չեն պատաս-խանել	Ընդամենը ստացված պատաս-խանները	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը կատարում է	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը մասնակի է կատարում	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի մասին հարցին չի պատասխանել
1	Արագածոտն	72	61	11	4	1	6
2	Արարատ	95	52	43	13	17	13
3	Արմավիր	97	69	28	6	7	15
4	Գեղարքունիք	57	37	20	11	7	2
5	Լոռի	56	5	51	24	12	15
6	Կոտայք	42	13	29	9	12	8
7	Շիրակ	42	18	24	6	4	14
8	Սյունիք	8	2	6	4	2	0
9	Վայոց Ձոր	8	1	7	4	2	1
10	Տավուշ	24	12	12	2	4	6
11	Երեւան	1	0	1	1	0	0
	Ընդամենը	**502**	**270**	**232**	**84**	**68**	**80**

2018 թվականին իրականացված մշտադիտարկման շրջանակներում հարցմանը պատասխաններ ուղարկած 232 համայնքների ղեկավարներից 80-ը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջների իրականացման մասին հարցին չի պատասխանել:

Իսկ մյուս 152 համայնքապետերի տրամադրած տեղեկությունների համապատասխան, օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները (հանրային նշանակության տեղեկությունների պրոակտիվ հրապարակումը) ամբողջությամբ կատարում է ՀՀ բոլոր՝ 502 համայնքապետերից 84-ը (մոտ 16,73%, իսկ հարցմանը պատասխանած համայնքապետերի 36,21%-ը), մասնակի է կատարում 68-ը (մոտ 13,55%, իսկ հարցմանը պատասխանած համայնքապետերի 29,31%-ը):

Օրենքի հիշյալ պահանջի ամբողջական կատարմամբ, ըստ համայնքապետերից ստացված պատասխանների, հարաբերականորեն **ամենաբարեխիղճը Սյունիքի եւ Վայոց Ձորի մարզերի 4-ական համայնքներն են: Երկու մարզերի 8-ական համայնքապետից 4-ը պատասխանել են, որ այդ տեղեկությունները հրապարակում են ամբողջությամբ, մասնակի հրապարակում են նույն համայնքներից երկուական համայնքապետ: Այս մարզերի հավաքական ցուցանիշին զիջում է Լոռու մարզը, որի՝ հարցմանը պատասխանած 51 համայնքապետերից 24-ը տեղեկացնում է (42,9%՝ բոլոր համայնքների թվից եւ 47,1%՝հարցմանը պատասխանած համայնքների թվից), որ**

հրապարակում են օրենքով սահմանված տեղեկությունները՝ ամբողջությամբ, իսկ 12-ը՝ մասնակիորեն:

ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանրային նշանակության տեղեկությունների պրոակտիվ հրապարակման մասին հարցի պատասխաններից դատելով, Արագածոտնի եւ Արմավիրի մարզերում ամենավատն են կատարում տեղեկությունների հրապարակման պահանջը: Այսպես. Արագածոտն մարզի համայնքների ընդամենը 5,6%-ն է, որ ամբողջությամբ հրապարակում է օրենքով սահմանված տեղեկությունները (հարցմանը պատասխանած համայնքների՝ 36,4%-ը), իսկ Արմավիրի մարզի համայնքների ընդամենը 6,2%-ն է, որ ամբողջությամբ հրապարակում է օրենքով սահմանված տեղեկությունները (հարցմանը պատասխանած համայնքների՝ 21,4%-ը):

2017 թվականին իրականացված մշտադիտարկման շրջանակներում հարցմանը պատասխաններ ուղարկած 215 համայնքների ղեկավարներից 71-ը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջների իրականացման մասին հարցին չեն պատասխանել:

Իսկ մյուս 144 համայնքապետերի տրամադրած տեղեկությունների համապատասխան, օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները (հանրային նշանակության տեղեկությունների պրոակտիվ հրապարակումը) ամբողջությամբ կատարում է ՀՀ բոլոր՝ 793 համայնքապետերից 76-ը (մոտ 9,6%, իսկ հարցմանը պատասխանած համայնքապետերի 35,3%-ը), մասնակի է կատարում 63-ը (մոտ 7,9%, իսկ հարցմանը պատասխանած համայնքապետերի 29,3%-ը):

Աղյուսակ 14.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված տեղեկությունների հրապարակման պահանջի կատարման որակը (պրոակտիվ հրապարակումներ), ըստ համայնքապետերի պատասխանների, **2017, օգոստոսի 15**

	Մարզեր եւ մայրաքաղաք	Հարցում ստացած համայնք-ների թիվը	Հարցմանը չեն պատաս-խանել	Ընդամենը ստացված պատաս-խանները	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի մասին հարցին չի պատաս-խանել	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը ամբողջու-թյամբ է կատարում	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը մասնակի է կատարում	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը չի կատարում
1	Արագածոտն	114	104	10	5	**3**	**2**	Պատ. չկա
2	Արարատ	95	77	18	3	**8**	**7**	Պատ. չկա
3	Արմավիր	97	83	14	8	**4**	**2**	Պատ. չկա
4	Գեղարքունիք	92	73	19	8	**6**	**5**	Պատ. չկա
5	Լոռի	107	39	68	20	**27**	**19**	2
6	Կոտայք	67	48	19	2	**10**	**7**	Պատ. չկա
7	Շիրակ	79	45	34	16	**8**	**8**	2
8	Սյունիք	72	59	13	5	**4**	**3**	1
9	Վայոց Ձոր	29	18	11	2	**3**	**6**	Պատ. չկա
10	Տավուշ	40	32	8	2	**2**	**4**	Պատ. չկա
11	Երեւան	1	0	1	0	**1**	**0**	0
	Ընդամենը	**793**	**578**	**215**	**71**	**76**	**63**	

Աղյուսակ 15.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված տեղեկությունների հրապարակման պահանջի կատարման որակը (պրոակտիվ հրապարակումներ), ըստ համայնքապետերի պատասխանների, **2016, հոկտեմբերի 10**

	Մարզեր եւ մայրաքաղաք	Հարցում ստացած համայնք-ների թիվը	Հարցմանը չեն պատաս-խանել	Ընդամենը ստացված պատաս-խանները	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը կատարում է	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը մասնակի է կատարում	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը չի կատարում
1	Արագածոտն	114	104	10	**1**	**4**	5
2	Արարատ	97	61	36	**19**	**8**	9
3	Արմավիր	97	81	16	**3**	**0**	13
4	Գեղարքունիք	92	61	31	**12**	**4**	15
5	Լոռի	107	26	81	**15**	**31**	35
6	Կոտայք	67	47	20	**6**	**5**	9
7	Շիրակ	119	77	42	**2**	**10**	30
8	Սյունիք	102	70	32	**6**	**4**	22
9	Վայոց Ձոր	44	26	18	**4**	**7**	7
10	Տավուշ	56	33	23	**5**	**1**	17
11	Երեւան	1	0	1	**1**	**0**	0
	Ընդամենը	**896**	**586**	**310**	**74**	**74**	**162**

Համեմատելով 2016-2018 թվականների մոնիտորինգի այս բաղադրիչի արդյունքները, կարելի է արձանագրել հետեւյալը: 2016թ-ին Հայաստանի համայնքների 8,3% (հարցումներին պատասխանած համայնքապետերի թվից՝ 22,6%-ը) տոկոսն էր հրապարակում հանրային տեղեկությունների **ամբողջական ծավալը**, այդ ցուցանիշը 2017թ-ին եղել է 9,6% (հարցումներին պատասխանած համայնքապետերի թվից՝ 35,3%-ը), իսկ 2018թ-ին այդ ցուցանիշն աճել է գրեթե կրկնակի՝ 16,7 % (հարցումներին պատասխանած համայնքապետերի թվից՝ 36,2%-ը):





Եթե 2016թ-ի տեղեկությունները **մասնակի հրապարակել էր** համայնքապետերի 8,3%-ը (հարցումներին պատասխանած համայնքապետերի թվից՝ 22,6%-ը), ապա 2017 թվականին՝ համայնքապետերի 7,9%-ը (հարցումներին պատասխանած համայնքապետերի թվից՝ 29,3%-ը), իսկ 2018 թվականին՝ 13,5%-ը (հարցումներին պատասխանած համայնքապետերի թվից՝ 29,3%-ը)։

2018թ-ի մոնիտորինգի ընթացքում տեղեկությունների պրոակտիվ հրապարակման բաղադրիչով համայնքապետերի լիազորությունների կատարման պատկերը ներկայացվում է ստորեւ բերվող գծապատկերներում։





1.5. Ավագանու գործունեության թափանցիկությունը

Իրավական կարգավորումը. ավագանու նստավայրերի, նիստերի վերաբերյալ իրազեկման եւ անցկացման, այդ նիստերին քաղաքացիների մասնակցության մասին

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 7, 11, 13, 15, 17, 35 եւ այլ հոդվածներով նախատեսվում է ավագանու նստավայրի գոյություն, որտեղ պետք է հրապարակվեն նախագծեր, իրավական ակտեր, որտեղ պետք է ավագանու անդամները իրենց գրասենյակային գործունեությունը ծավալեն:

Մշտադիտարկման արդյունքը. ավագանու նստավայրերի, նիստերի վերաբերյալ իրազեկման եւ անցկացման, այդ նիստերին քաղաքացիների մասնակցության մասին

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել է ավագանու գործունեության պայմանները, մասնավորաբար, ավագանու նստավայրի առկայությունը, նիստերի եւ հանրային լսումների անցկացման մասին իրազեկման ցուցանակների առկայությունը համայնքում, նիստերի անցկացման սրահում կամ դահլիճում քաղաքացիների մասնակցության համար անհրաժեշտ աթոռների առկայությունը եւ քանակը: Այս բաժնում ամփոփված տվյալների համար հիմք են ծառայել համայնքների ղեկավարների պատասխանները: Պատասխաններում բերված տեղեկությունների իսկությունը անհնար է եղել ստուգել:

Աղյուսակ 16.
Ավագանու գործունեության պայմանների եւ նիստերի իրազեկման պայմանների առկայության մակարդակը.

	մարզեր եւ մայրաքաղաք	համայնքների թիվը	Հարցումներ		ավագանու նստավայրի առկայություն	Ավագանու նիստերի եւ հանրային լսումների սրահի առկայություն	իրազեկման ցուցանակներ			ավագանու նիստերի սրահում նստատեղեր քաղաքացիների համար		
			ստացված պատասխան	անպատասխան			առկայություն	ընդամենը քանակ	հաստ/համայնք	առկայություն	ընդամենը քանակ	աթոռ/դահլիճ
1	Արագածոտն	72	11	61	4	0	1	4	4.0	4	128	32.0
2	Արարատ	95	43	52	25	13	31	60	1.9	25	906	36.2
3	Արմավիր	97	28	69	13	10	18	42	2.3	12	363	28.6
4	Գեղարքունիք	57	20	37	13	9	17	30	1.8	16	435	27.2
5	Լոռի	56	51	5	36	29	39	102	2.6	34	1661	48.9
6	Կոտայք	42	29	13	20	15	24	161	6.7	20	457	22.9
7	Շիրակ	42	24	18	13	7	16	24	1.5	11	364	33.1
8	Սյունիք	8	6	2	5	5	5	24	4.8	6	207	34.5
9	Վայոց Ձոր	8	7	1	4	3	6	34	5.7	5	93	18.6
10	Տավուշ	24	12	12	8	6	10	41	4.1	6	6	1.0
11	Երեւան	1	1	0	1	1	1	1	1.0	1	1	1.0
	Ընդամենը	**502**	**232**	**270**	**142**	**98**	**168**	**523**	**3.1**	**140**	**4621**	**32.9**

Նստավայրերի մասին

Ըստ մշտադիտարկման արդյունքների, հարցումներին պատասխանած 232 համայնքների ղեկավարներից միայն 142-ն է նշել, որ իրենց համայնքում կա ավագանու նստավայր (չշփոթել ավագանու նիստերի անցկացման վայրի հետ): Դա հարցումներին պատասխանած համայնքների 61,2%-ն է, իսկ բոլոր 502 համայնքների թվից՝ 28,28%-ը:



Ավագանու նիստերի եւ/կամ հանրային քննարկումների սրահների/դահլիճների մասին

Ըստ մշտադիտարկման արդյունքների, հարցումներին պատասխանած 232 համայնքների ղեկավարներից միայն 98-ն է նշել, որ իր համայնքում կա ավագանու նիստերի եւ/կամ հանրային քննարկումների անցկացման սրահ կամ դահլիճ: Դա հարցումներին պատասխանած համայնքների 42,24%-ն է, իսկ բոլոր 502 համայնքների թվից՝ 19,52%-ը:



Իրազեկող ցուցանակների մասին

Հարցումներին պատասխանած 232 համայնքների ղեկավարներից միայն 168-ն է նշել, որ իր համայնքում կան ավագանու նիստերի եւ հանրային լսումների մասին իրազեկող համայնքապատկան ցուցանակներ: Դա հարցումներին պատասխանած համայնքների 72,41%-ն է, իսկ բոլոր 502 համայնքների թվից՝ 33,46%-ը: Ցուցանակների առկայությունը հաստատող համայնքապետերի տրամադրած տեղեկությունների համաձայն, 168 համայնքներում առկա է ընդհանուր առմամբ 523 ցուցանակ: Մի շարք քաղաքային համայնքներում, չնայած այն հանգամանքին, որ նախատեսվում է ունենալ 2000 հոգուն մեկ տեղ ընկնող իրազեկման ցուցանակներ, օրենքով նախատեսվածից պակաս թվով են ցուցանակները:



Ավագանու նիստերի սրահում քաղաքացիների նստատեղերի մասին

Ըստ մշտադիտարկման արդյունքների, հարցումներին պատասխանած 232 համայնքների ղեկավարներից միայն 140-ն է նշել, որ իրենց համայնքի ավագանու նիստերի սրահում կամ դահլիճում առկա են քաղաքացիների մասնակցության համար նախատեսված աթոռներ եւ նշել է այդ աթոռների քանակը: Դա հարցումներին պատասխանած համայնքների 60,34%-ն է, իսկ բոլոր 502 համայնքների թվից՝ 27,88%-ը: Նստատեղերի առկայությունը հաստատող համայնքապետերի տրամադրած տեղեկությունների համաձայն, 140 համայնքներում առկա է առնվազն 4621 նստատեղ:

Այս հարցին պատասխանած համայնքապետերից մի քանիսը, չնայած պարզորոշ տրված հարցին, թե քանի նստատեղ կա նիստերի անցկացման սրահում, պատասխանել են. «ըստ ներկաների թվի» (Դարբնիկ, Արարատի մարզ), «ինչքան, որ տեղ կա՝ համայնքապետի աշխատասենյակում» (Հովտամեջ, Արմավիրի մարզ), «ըստ ցանկացողների թվի» (Մրգաշատ, Արմավիրի մարզ), «կախված քանակից մշակույթի տան մեծ կամ փոքր դահլիճներում» (Լանջաղբյուր, Գեղարքունիքի մարզ), «ըստ ցանկացողների քանակի» (Կարճաղբյուր, Գեղարքունիքի մարզ), «բավարար» (Եղվարդ, Կոտայքի մարզ), «համայնքապետի աշխատասենյակում ցանկացողներին կապահովեն նստատեղերով» (Պռոշյան, Կոտայքի մարզ), «ըստ ցանկության» (Բենիամին եւ Բայանդուր համայնքներ, Շիրակի մարզ):

2. Բացահայտումներ եւ առաջարկվող կարգավորումներ

2.1. Ամփոփելով Հայաստանի ՏԻՄ-երի թափանցիկության, հաշվետվողականության եւ հանրային մասնակցության ապահովման 2018թ-ի մշտադիտարկման նախնական պատկերը, ստորեւ ներկայացվում են այն խնդիրները, որոնք բացահայտվել են մոնիտորինգի արդյունքում եւ՝ առաջարկություններ դրանց կարգավորման համար: Սրանք սկզբունքորեն չեն տարբերվում 2016 եւ 2017 թվականների մոնիտորինգների ընթացքում բացահայտված խնդիրներից:

Աղյուսակ 17.

	Խնդիր	Կարգավորման առաջարկություն
1	Համայնքապետերի մեծ մասը, որպես կանոն, սկզբունքորեն խախտել է ավագանու նիստերի մասին հանրային իրազեկման օրենսդրությամբ սահմանված պահանջները, մասնավորաբար չի պահպանվել «ՏԻ մասին» օրենքով նախատեսված ցուցանակների քանակը՝ 2000 հոգուն մեկ տեղ ընկնող քանակությամբ: Ակնհայտորեն, մի շարք համայնքներում ՏԻՄ-երը դժվարություն ունեն կամ ցանկություն չունեն գործող համայնքային կայքերում ավագանու նիստի մասին պատշաճ իրազեկում հրապարակել նիստի օրվա ժամի, տեղի եւ օրակարգի նախագծի ի հայտ գալու պահից (հերթական նիստինը՝ առնվազն 7 օր առաջ, արտահերթ նիստինը՝ առնվազն 1 օր առաջ, բոլոր համայնքների համար, բացառությամբ Երեւան, Գյումրի եւ Վանաձոր համայնքների):	Ըստ 2017թ-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «ՏԻ մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների, ավագանու նիստերի մասին իրազեկումները պիտի կարգավորվի 15 եւ 63 հոդվածներով: Ըստ նույն օրենքի 17-րդ հոդվածի երրորդ մասի, արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը եւ համապատասխան փաստաթղթերն ավագանու անդամներին տրամադրվում են նիստից մեկ օր առաջ, եւ ըստ չորրորդ մասի, արտահերթ նիստի օրակարգի ձեւավորումը, արտահերթ նիստի մասին տեղեկացումն ու անցկացումն իրականացվում են հերթական նիստի համար սույն օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածի առանձնահատկությունները:
2	Համայնքապետերից մի քանիսը իրազեկման ցուցանակների մասին իրենց պատասխաններում պատմում են, որ դրանք հաճախ վնասվում են համայնքացիների կողմից, կոտրվում են կամ փչացվում եւ այդ պատճառով համայնքապետարանը դրանք քիչ է օգտագործում կամ չի օգտագործում: Սա առնվազն տարօրինակ է, այն տեսանկյունից, որ համայնքապետի ուղղակի պարտականությունն է տնօրինել համայնքապատկան գույքը, այսինքն, գույքին որեւէ մեկի կողմից վնաս հասցնելու դեպքում համապատասխան իրավական գործողությունների պետք է դիմել:	Համայնքապետերը պարտավոր են ջանքեր ներդնել համայնքապատկան գույքը պատշաճ տնօրինելու համար, համայնքային գույքի վնասման եւ/կամ կողոպուտի դեպքերում՝ դիմել ոստիկանություն: Այսպիսի հետեւողական աշխատանքը կհանգեցնի իրավապահների ավելի մեծ աչալրջության, վանդալիզմի նվազման, համայնքային միջոցների խնայման եւ հանրային իրազեկման մակարդակի բարձրացման:
3	Անձանց՝ տեղեկությունների հարցումներին պատասխանելու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտականությունը չի կատարել համայնքների ղեկավարների 53,78%-ը: Մի շարք դեպքերում ակնհայտ է եղել հարցված տեղեկությունները չտրամադրելու հետեւողականությունը:	Համայնքների ղեկավարները, ի թիվս այլ օրենքների, պարտավոր են հետեւել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքին, մասնավորաբար, համայնքացիների գրավոր հարցումներին պատասխանելու եւ հարցված՝ իրենց մոտ տնօրինվող եւ օրենսդրությամբ գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող դրույթներին (Հոդվածներ 5, 8, 9, 10):

		Մասնավորաբար, տեղեկության գրավոր հարցումներին համայնքների ղեկավարները պարտավոր են պատասխանել հարցումն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում եւ տրամադրել տեղեկությունը, եթե այն իրենք տնօրինում են եւ չի պարունակում օրենքով սահմանված գաղտնիք: Իսկ տեղեկությունը տրամադրելու համար լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության դեպքում, պարտավոր են հնգօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել տեղեկություն որոնողին եւ տեղեկությունը տրամադրել 30-օրյա ժամկետում:
4	Ավագանու նստավայրը մի շարք համայնքապետեր շփոթում են ավագանու նիստերի անցկացման վայրի հետ: Կասկած կա, որ համայնքապետերի եւ ավագանիների անդամների մի մասը անտեղյակ է, որ համայնքի ավագանին օրենքով պարտավոր է նստավայր ունենալ: Նրանք ջանքեր չեն ներդնում ավագանու նստավայր սահմանելու, այն կահավորելու եւ օգտագործելու համար: Բոլոր համայնքապետերը հստակ հասկանում եւ ընկալում են համայնքապետի եւ աշխատակազմի նստավայրը որպես համայնքապետարան, սակայն ոչ բոլորն են պատկերացնում, որ ավագանին է՛ւ օրենքով, է՛ւ ողջամտորեն, բարեխիղճ աշխատանք կատարելու համար որոշակի աշխատանքային պայմանների կարիք ունի եւ պիտի ունենա նստավայր, ինչը նախատեսված է օրենքով: Այդ նստավայրը կարող է լինել է՛ւ ավագանու նիստերի անցկացման վայրը՝ սրահը, է՛ւ աշխատանքային հանդիպումների, հանձնաժողովների նիստերի, աշխատանքի, համայնքացիների ընդունելության վայրը: Սակայն, ակնհայտորեն, եթե ավագանու նիստերն անցնում են համայնքապետի աշխատասենյակում, այն չի կարող համարվել ավագանու նստավայր: Ավագանու նստավայրի բացակայությունը խոչընդոտում է ավագանու գործունեության թափանցիկությանը, որովհետեւ, այնտեղ, «ՏԻ մասին» օրենքի համաձայն, պիտի հրապարակվեն ավագանու կայանալիք նիստի մասին տեղեկությունները, օրակարգը, որոշումների նախագծերը եւ կայացված որոշումները, որոնց անարգել ծանոթանալու իրավունք ունեն բոլոր անձինք: Սակայն, երբ չկա ավագանու նստավայր, այդ տեղեկությունները չեն հրապարակվում նստավայրում:	Համայնքների ղեկավարները եւ ավագանու անդամները պարտավոր են ջանքեր ներդնել համայնքի ավագանու համար նստավայր սահմանելու, այն կահավորելու եւ աշխատանքային պայմաններով հագեցնելու համար: «ՏԻ մասին» օրենքի համաձայն, ՏԻՄ-երը գործում են իրենց նստավայրում, համանման դրույթ գործել է նաեւ նախկինում, սկսած 1996 թվականից: (Այժմ հոդված 7, 13, 15, 63) Երեւան համայնքի դեպքում ավագանու նստավայրն ու դրա գործառույթները սահմանված եւ հիշատակված են մի շարք հոդվածներով. հոդվածներ 7, 18, 21, 25, 32: Ակնհայտ է, որ առանց նստավայրի գոյության եւ դրանում աշխատանքային անհրաժեշտ պայմանների, անհնար է լիարժեք կերպով կատարել օրենքով նախատեսված ավագանու գործառույթները: Ավագանու հաստատությունը, որը տեղական ինքնակառավարման երկու մարմիններից մեկն է, այսպիսով լուրջ բարդություններ ունի կայանալու համար:
5	Համայնքապետերից ստացված պատասխաններում առկա համացանցային հղումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բազմաթիվ դեպքերում կայքերի վիրտուալ հղումներից մի ամբողջ շարք տեխնիկական թերություններ ունի, դրանք գրված են հայերեն տառերով, որոնք, տեքստային հղումներ դարձնելու դեպքում, ներկայանում են «%5»-ի բազմակի շարքերով եւ տեխնիկական բարդությունների են հանգեցնում:	Հարկավոր է վերապատրաստել համայնքապետարանների կայքերի կառավարիչներին կամ մասնագիտական խորհրդատվություն իրականացնել նրանց համար այսօրինակ տեխնիկական խնդիրները կարգավորելու համար:

Այլ առաջարկություններ

Համայնքների ղեկավարներին եւ ավագանիների անդամներին.

1. Նորից ծանոթանալ «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին»[11] (Ուժի մեջ է 2018 թ ապրիլի 7-ից), «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով նախատեսված սեփական պարտականություններին եւ լիազորություններին, ապա ծանոթացնել դրանց համայնքապետարանների համապատասխան աշխատակիցներին, այդ թվում՝ համայնքի ղեկավարի տեղակալ(ներ)ին, աշխատակազմի քարտուղարին, իսկ առկայության դեպքում՝ հասարակայնության հետ կապերի եւ այլ բաժինների պետերին:
2. Հանձնարարել համայնքապետարանի համապատասխան աշխատակիցներին՝ կատարելու հիշյալ օրենքներով նախատեսված՝ հանրային պրոակտիվ իրազեկման, անձանց տեղեկության հարցումներին պատշաճ պատասխանելու պարտականությունները:
3. Կազմակերպել եւ անցկացնել օրենսդրությամբ նախատեսված՝ համայնքի զարգացման ծրագրերի նախագծերի, համայնքի բյուջեի նախագծի եւ համայնքային խնդիրների շուրջ օրենքով նախատեսված հանրային քննարկումներ կամ լսումներ՝ համապատասխան ընթացակարգերով:
4. Բարեխղճորեն իրականացնել հանրային հաշվետվողականության, տեղական ինքնակառավարման հնարավոր առավել թափանցիկության եւ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության այլ պարտականությունները, այդ թվում ավագանու գործունեության համար պայմանների ստեղծումը, այդ թվում ավագանու նստավայրի սահմանումը, ավագանու նիստերի մասին պատշաճ իրազեկումը, ավագանու նիստերի բաց գումարումը, դրանցում հանրության ներկայության եւ մասնակցության հնարավորությունների ու պայմանների ստեղծումը եւ այլն:
5. Ջանքեր ներդնել այս խնդիրների կարգավորման համար համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների վերապատրաստման, գիտելիքների հարստացման, հմտությունների ձեւավորման եւ պրակտիկայի խորացման համար:
6. Համագործակցել ՏԻ ոլորտի փորձագետների եւ համայնքացիական հասարակության մասնագիտացած կազմակերպությունների հետ՝ վերոհիշյալ ջանքերի իրականացման եւ նպատակային գործունեության համար:

[11] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123348

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությանը եւ մարզպետարանների համապատասխան վարչությունների ու բաժինների ղեկավարներին.

1. Հետեւողական մեթոդական աջակցություն եւ խորհրդատվություն ցուցաբերել համայնքապետերին՝ «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով նախատեսված՝ ՏԻՄ-երի հանրային հաշվետվողականության, թափանցիկության եւ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության պարտականությունները պատշաճ կատարելու համար:
2. Համագործակցել ՏԻ ոլորտի փորձագետների եւ համայնքացիական հասարակության մասնագիտացված կազմակերպությունների հետ՝ վերոհիշյալ ջանքերի իրականացման համար:
3. Օրինական եղանակով խրախուսել այս ոլորտում պարտականությունները պատշաճ կատարող կամ կատարելու համար բարեխիղճ ջանքեր ներդնող համայնքապետերին, ավագանու անդամներին եւ համայնքապետարաններին:

Տեղական ինքնակառավարման ոլորտի մասնագիտացված կազմակերպություններին եւ փորձագետներին.

1. Ուսուցումների, խորհրդատվության եւ այլ եղանակներով տեխնիկական աջակցություն ցուցաբերել ՏԻՄ-երին «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով նախատեսված՝ ՏԻՄ-երի հանրային հաշվետվողականության, թափանցիկության եւ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության ապահովման պարտականությունները պատշաճ կատարելու համար:

Զանգվածային լրատվամիջոցներին, լրագրողներին.

1. Առավել մեծ ուշադրություն հատկացնել տեղական ինքնակառավարման ոլորտին՝ հաճախակի լուսաբանելով այս ոլորտում կառավարման թերությունները, սխալները, կոռուպցիոն ռիսկերը, շահերի բախումները, ինչպես նաեւ ՏԻՄ-երի հանրային հաշվետվողականության, թափանցիկության եւ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության վիճակը եւ օրենսդրությամբ նախատեսված պարտականությունների կատարման որակը:

3. Եզրափակում

Այս զեկույցի նախնական տարբերակը Հայաստանի մարզերում քննարկվել է 2018թ-ի հունիս ամսին, ակնկալելով շահագրգիռ կողմերի դիտողությունները եւ առաջարկությունները ինչպես մեթոդաբանության, բացահայտված խնդիրների, այնպես էլ դրանց կարգավորման մասին: Քննարկումները տեւել են մոտ 2-3-ական ժամ:

Աղյուսակ 18.
Այս զեկույցի նախնական տարբերակի մարզային քննարկումների մասնակիցների խմբերի վիճակագրությունը.

			Մասնակիցների թիվը			
		Ժամկետ-ները	ՏԻՄ-երի ներկայացուցիչներ. համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար եւ այլն	Մարզպե-տարանի պաշտոն-յաներ	Այլ մասնա-կիցներ. ԶԼՄ, ՀԿ եւ այլն	Ընդամենը
1	Արագածոտն	22.6.2018	19	0	17	36
2	Արարատ	30.6.2018	6	2	23	31
3	Արմավիր	19.6.2018	22	1	13	36
4	Գեղարքունիք	37.6.2018	17	1	4	22
5	Լոռի	20.6.2018	23	2	12	37
6	Կոտայք	26.6.2018	17	4	13	34
7	Շիրակ	18.6.2018	17	1	2	20
8	Սյունիք	29.6.2018	5	2	6	13
9	Վայոց Ձոր	28.6.2018	5	2	7	14
10	Տավուշ	21.6.2018	12	3	16	31
	Ընդամենը		143	18	113	274

Մոնիտորինգի արդյունքները ներկայացրել է ծրագրի ղեկավար Լեւոն Բարսեղյանը: Մասնակիցներին տրամադրվել է զեկույցի նախագիծը՝ պատճենահանված: Արդյունքների ներկայացումը ուղեկցվել է PPP շնորհանդեսով: Տեղեկացվել է, որ զեկույցը նախնական է՝ սեւագիր, այդ քննարկումներից, համայնքների ղեկավարներից, մարզպետարաններից, ՀաՄաՏեղ ծրագրի գործընկերներից եւ ԱՄՆ ՄԶԳ պատասխանատուներից, ՀՀ ՏԿԶ նախարարությունից կարծիքները եւ դիտողությունները ստանալուց, դրանք ուսումնասիրելուց եւ համադրելուց հետո վերջնական տեսքի է բերվելու եւ հրապարակվելու է սեպտեմբերի վերջին – հոկտեմբերի սկզբին:

Այս մշտադիտարկման արդյունքները, ինչպես եւ 2016 եւ 2017 թվականների մոնիտորինգների ժամանակ, ամփոփվել են 5 բաղադրիչներով, որոնք ներկայացվել են քննարկումների ընթացքում.

1. Համայնքապետերի կողմից ԺԱԱ-ի տեղեկության հարցումներին արձագանքի որակը. Տրամադրված տեղեկությունները եղել են լիարժե՞ք, թերի՞, թե՞ անպատասխան են

թողնվել հարցումները:

2. Համայնքապետերի կողմից ԺԱԱ-ի տեղեկության հարցումներին արձագանքի ժամկետները. պատասխանները եղել են օրենքով սահմանված ժամկետու՞մ, ուշացա՞ծ, թե՞ անպատասխան են թողնվել հարցումները:
3. ՏԻՄ-երի կողմից հանրային քննարկումների կամ լսումների պրակտիկան՝ 2017թ-ին: Քանի՞ հանրային լսում է կազմակերպվել, ե՞րբ, քանի՞ հոգի է մասնակցել, արդյո՞ք համայնքի ղեկավարը կայացած հանրային քննարկումների կամ լսումների մասին տեղեկություններ հաղորդել է համայնքի ավագանուն:
4. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված տեղեկությունների հրապարակման պրոակտիվ ծավալը (7-րդ հոդվածի 3-րդ մաս) հրապարակե՞լ են արդյոք համայնքների ղեկավարները: Եթե այո, ապա ի՞նչ ծավալով:
5. Համայնքի ավագանու գործունեության թափանցիկության որոշ պայմանների ապահովման մակարդակը. Ավագանին արդյո՞ք ունի սահմանված նստավայր, առկա՞ են արդյոք ավագանու նիստերի մասին համայնքի բնակիչներին իրազեկելու ցուցանակներ, քանի՞սն են դրանք, արդյո՞ք ավագանու նիստերին մասնակցել կամեցող անձանց համար կան նստատեղեր, եթե այո՝ քանի նստատեղ, եւ այլն:

Քննարկումների մասնակիցներին եւ զեկույցում ներկայացվել է նաեւ որոշակի համեմատություն 2016 եւ 2017 թվականներին անցկացված համանման մշտադիտարկման արդյունքների հետ:

Քննարկումներին մասնակցած համայնքների եւ մարզպետարանների ներկայացուցիչներն այս քննարկումների ընթացքում ավելի տեղեկացված էին ՀաՄաՏեղ ծրագրին եւ այս մոնիտորինգին, քան՝ նախորդ տարիներին էին տեղյակ:

Համայնքների ներկայացուցիչների եւ մարզպետարանների ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը հետաքրքրված էր այս մշտադիտարկումներով, հետաքրքրված էին իրենց մարզի համայնքների ցուցանիշներով եւ մարզի համայնքների ընդհանուր ցուցանիշներով, հաճախ որոշակի նախանձով էին արտահայտվում Լոռու, Վայոց Ձորի մարզերի թափանցիկության բարձր ցուցանիշների մասին (հարցումների արձագանքները Լոռու մարզում արդեն երկրորդ տարին է՝ անհամեմատ բարձր է, քան մյուս մարզերում, համայնքների ընդհանուր թվի 65-70 տոկոսը):

Արմավիրի եւ Արագածոտնի մարզերի համայնքների ընդհանուր ցուցանիշներն ամենացածրն են, արդեն երրորդ տարին է՝ 3-10 տոկոս (համայնքների ընդհանուր թվի):

Քննարկումների ընթացքում մասնակիցներին հետեւողականորեն բացատրվել է վերոհիշյալ խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը, հորդորվել է հարցումներին պատասխանել օրենքով սահմանված կարգով, հանրային լսումները եւ ավագանու նիստերը հրավիրել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում, որեւէ հնարավորություն հայթայթել եւ սահմանել ավագանու նստավայր՝ գործունեության համապատասխան պայմաններով, իրազեկման ցուցանակներ տեղադրել՝ ավագանու նիստերի եւ հանրային լսումների իրազեկման օրենքով սահմանված չափորոշիչներին համապատասխան: Ի տարբերություն նախորդ տարիների համանման քննարկումների, այս շարքն անցել է առավելապես ընկերական մթնոլորտում:

Բոլոր քննարկումների ժամանակ ակնհայտ է եղել համայնքների ղեկավարների մի մասի լուրջ մտահոգությունը եւ դժգոհությունը՝ համայնքների խոշորացման ընթացքի եւ մեթոդների մասով: Չնայած մի քանի անգամ բացատրվել է, որ այս քննարկումները խոշորացման մասին չեն, համայնքների ներկայացուցիչները եւ այլ քաղաքացիներ շարունակել են դժգոհել խոշորացման 2015-2017 թվականների եղանակից:

Մոնիթորինգի նախնական զեկույցը տեղադրված է www.publicdata.am կայքում[12]:

Հայաստանի ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության 2018թ-ի մոնիտորինգի զեկույցի մարզային քննարկումներին ի պաշտոնե հրավիրվել են համայնքապետեր, մարզպետարանի ՏԻՄ-երի վարչության պետեր եւ աշխատակիցներ, տեղական ԶԼՄ-ների եւ ՔՀԿ-ների ներկայացուցիչներ: Այդ քննարկումներին գենդերային բաշխումը բերված է աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 19.
Այս զեկույցի նախնական տարբերակի մարզային քննարկումների մասնակիցների խմբերի սեռային կազմի վիճակագրությունը.

		Ժամկետ-ները	Մասնակիցների թիվը		Ընդամենը
			Կանաք	Տղամարդիկ	
1	Արագածոտն	22.6.2018	17	19	36
2	Արարատ	30.6.2018	15	16	31
3	Արմավիր	19.6.2018	10	26	36
4	Գեղարքունիք	37.6.2018	7	15	22
5	Լոռի	20.6.2018	12	25	37
6	Կոտայք	26.6.2018	9	25	34
7	Շիրակ	18.6.2018	2	18	20
8	Սյունիք	29.6.2018	10	3	13
9	Վայոց Ձոր	28.6.2018	11	3	14
10	Տավուշ	21.6.2018	17	14	31
	Ընդամենը		110	164	274

ԺԱԱ-ն ՀՀ ՏԻՄ-երի կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով սահմանված թափանցիկության, հաշվետվողականության եւ հանրային մասնակցության ապահովման պարտավորությունների 2018թ-ի մշտադիտարկման այս զեկույցի դիտողությունների եւ առաջարկությունների հիման վրա կատարելագործվելու է եւ առաջիկա տարիներին եւս իրականացնելու է Հայաստանի բոլոր ՏԻՄ-երի թափանցիկության մշտադիտարկում: Հետագայում նույնպես համայնքապետերին, մարզպետարաններին, ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությանը եւ քաղաքացիական հասարակությանն են ներկայացվելու տարեկան զեկույցներ:

Հաշվի առնելով մի շարք համայնքապետերի՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրենց պարտականությունների կատարման նկատմամբ արհամարհանքը եւ ոչ լուրջ վերաբերմունքը,

[12] https://publicdata.am/wp-content/uploads/2018/06/15.06.2018-LSG-FOI-Pre-report-2018-JCA-CFOA.pdf

մասնավորաբար, հասարակական կազմակերպության տեղեկությունների հարցումների անտեսումը, ինչը վարչական իրավախախտում է, իսկ այս մոնիտորինգի ընթացքում, պարզվեց, որ այդպիսի վարչական իրավախախտումներ կատարեցին ՀՀ 502 համայնքապետերից 270-ը: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ստիպված է հանրային նշանակության եւ ՀՀ օրենսդրությամբ գաղտնիք չհանդիսացող տեղեկությունները համայնքապետերից ստանալու համար դիմել ՀՀ վարչական դատարան, պահանջելով պարտավորեցնել օրինազանց համայնքապետերին պատասխանել տեղեկությունների հարցումներին, նրանց վարչական պատասխանատվության ենթարկել եւ փոխհատուցել դատական ծախսերը:

Համայնքապետարաններից ստացվող տեղեկությունների մի մասը հրապարակվում է ակումբի www.publictada.am կայքում՝ համընդհանուր մատչելիության համար:

Այս զեկույցը կազմել է Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի համապատասխան աշխատակազմը, ծրագրի ղեկավար, ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանի ղեկավարությամբ:

Այս զեկույցի մասին բոլոր առաջարկությունները եւ դիտողությունները կարող եք ուղարկել հետեւյալ հասցեներով. Հայաստան, Գյումրի, Պուշկինի փ., 96, կամ levon@asparez.am

Հեռախոսային առաջարկների եւ դիտողությունների համար կարող եք դիմել ծրագրի իրավախորհրդատու Արինա Մեծոյանին, 031250622 հեռախոսահամարով կամ aspareziravaban@gmail.com էլեկտրոնային հասցեով:

27 սեպտեմբերի, 2018թ.
Հայաստանի Հանրապետություն

Հավելվածներ

Հավելված՝ 1.

ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆ-3102,ԳՅՈՒՄՐԻ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 96,ՀԵՌԱԽՈՍ՝ (0312) 50622

JOURNALISTS' CLUB "ASPAREZ"
NON-GOVERNMENTAL ORGANIZATION
POUSHKIN STREET 96,GYUMRI,ARMENIA 3102, TEL: (0312) 50622
Email: aspareziravaban@gmail.com http://www.asparez.am http://www.publicdata.am

_____ համայնքի ղեկավար _____ ին
Հասցե.
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ-ի իրավախորհրդատու,
ՀՀ քաղաքացի Արինա Մեծոյանից
Հասցե, Հայաստան-3102, Գյումրի, Պուշկինի փ., 96, հեռախոս՝ 0312 50622

Տեղեկության հարցում 1/2018
01 մարտի, 2018

Հարգելի պարոն _____ ,
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «ՀաՄաՏեղ»՝ Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը ծրագրի շրջանակներում[13], շահագրգիռ լինելով ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի աշխատանքի որակի բարելավմամբ, մասնավորաբար, տեղական իշխանությունների գործունեության թափանցիկությամբ եւ հաշվետվողականությամբ, արդեն երրորդ տարին է, ինչ ուսումնասիրում է համայնքապետարանների գործունեության թափանցիկության մակարդակը: 2016 եւ 2017թվականների այդ ուսումնասիրությունների արդյունքներն անցած տարիներին ներկայացվել են հանրությանը եւ համայնքապետերին: Համացանցում կարող եք դրանք գտնել հետեւյալ հղումներով.
2016թ.-http://www.asparez.am/wp-content/uploads/2015/10/29.12.2016-General-LSG-FOI-Transp-report-2016-CFOA-USAID.pdf
2017թ.-http://www.asparez.am/wp-content/uploads/2017/10/10.10.2017-LSG-FOI-Transp-general-report-2017-CFOA-USAID.pdf

Համայնքային իշխանությունների գործունեության թափանցիկության 2018 թվականի մոնիտորինգի համար, մենք դիմում ենք ՀՀ բոլոր համայնքների ղեկավարներին, խնդրելով մեզ տրամադրել համայնքապետարանում առկա, չհրապարակված եւ օրենքով գաղտնիք չպարունակող տեղեկությունները: Ուսումնասիրությունից բացի, այդ տեղեկությունների մի մասը հրապարակելու ենք www.publicdata.am կայքում, իսկ ուսումնասիրելուց եւ վերլուծելուց հետո կպատրաստենք ՀՀ համայնքային իշխանությունների գործունեության թափանցիկության 2018 թվականի զեկույց եւ այն եւս կհրապարակենք:

Այս հետազոտության համար, առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, խնդրում եմ ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները՝ դրանք ուղարկելով իմ էլեկտրոնային հասցեին. aspareziravaban@gmail.com
Եթե հարցված տեղեկությունների մի մասն ինչ-որ տեղում հրապարակվել է, խնդրում եմ այդ մասով պատասխանի փոխարեն ուղղակի նշել հրապարակման աղբյուրը:

[13] http://www.asparez.am/project/celog-cfoa-usaid/#.Wlcwr6iWaUk

Հաշվի առնելով, որ ներքոհիշյալ հարցվող տեղեկությունները ծավալուն են եւ օրենքով սահմանված 5 օրը բավարար չէ դրանք տրամադրելու համար, ակնկալում եմ այդ տեղեկությունները Ձեզնից ստանալ 30-օրյա ժամկետում:

1. 2017թ-ին համայնքի ավագանու կողմից ընդունված բոլոր որոշումների համացանցային հղում(ներ)ը,
2. 2017թ-ին համայնքի ղեկավարի կողմից ընդունված բոլոր որոշումների համացանցային հղում(ներ)ը,
3. Համայնքի գործող հնգամյա զարգացման ծրագրի համացանցային հղումը,
4. Համայնքի 2018 թվականի բյուջեի համացանցային հղումը,
5. Համայնքի աշխատակազմի 2018թ-ի հաստիքացուցակի հաստատման վերաբերյալ ավագանու որոշման համացանցային հղում(ներ)ը,
6. Համայնքում 2018թ-ի համար տեղական տուրքերի եւ վճարների դրույքաչափերը սահմանող ավագանու որոշման պատճենը կամ համացանցային հղումը:
7. Քանի՞ հանրային լսում կամ քննարկում է կազմակերպվել եւ անցկացվել համայնքում 2017թ-ի ընթացքում: Եթե այդպիսիք անցկացվել են, ապա.
   7.1. Ե՞րբ են տեղի ունեցել դրանք:
   7.2. Ի՞նչ եղանակներով է հանրությունը իրազեկվել դրանց մասին:
   7.3. Քանի՞ հոգի է մասնակցել դրանցից յուրաքանչյուրին:
   7.4. Համայնքի ավագանուն տրամադրվե՞լ է արդյոք տեղեկատվություն դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ:

8. 2017թ-ի ընթացքում արդյո՞ք հրապարակել եք հետեւյալ տեղեկությունները, որոնց տարին առնվազն մեկ անգամ հրապարակումը նախատեսված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով, եթե այո, ապա որտե՞ղ եւ ե՞րբ.
   1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները,
   2) բյուջեն,
   3) գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
   4) հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
   5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը,
   6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
   7) հասարակական միջոցառումների ծրագրերը,
   8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
   9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
   10) տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,
   11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը,
   12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները,
   13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

9. Համայնքային բոլոր կազմակերպությունների անվանումները, հասցեները, տնօրենների անուն-ազգանունները եւ աշխատանքային հեռախոսահամարները, կամ այդ տեղեկությունների համացանցային հղում(ներ)ը:
10. Ունի՞ արդյոք Ձեր ղեկավարած համայնքի ավագանին նստավայր, եթե այո, ապա որտե՞ղ է այն գտնվում:
11. Ունի՞ արդյոք Ձեր ղեկավարած համայնքը ավագանու նիստերի եւ հանրային միջոցառումների համար հանրության իրազեկման ցուցանակներ, եթե այո, ապա քանի՞սն են դրանք:
12. Ունի՞ արդյոք Ձեր ղեկավարած համայնքը ավագանու նիստերի դահլիճ:
13. Ավագանու նիստերին ներկա գտնվել ցանկացողների համար քանի՞ նստատեղ կա ավագանու նիստերի դահլիճում:
14. Ի՞նչ համայնքային ծառայություններ է մատուցում համայնքապետարանը համայնքի բնակչությանը, խնդրում եմ համապատասխան նշումներ կատարել ստորեւ բերված աղյուսակում.

N	Համայնքային ծառայության անվանումը	Համայնքում ծառայությունը մատուցվում է, թե ոչ (նշել «+», եթե մատուցվում է, եւ՝ «-», եթե չի մատուցվում)	Եթե ծառայությունը մատուցվում է, ապա նշել վճարի չափը կամ սակագինը: Եթե ծառայությունը անվճար է, ապա նշել «անվճար»:
1	Ներհամայնքային տրանսպորտ		
2	Աղբահանություն		
3	Սանիտարական մաքրում		
4	Համայնքի կողմից ջրամատակարարման եւ ջրահեռացման իրականացում		

5	Փողոցների գիշերային լուսավորություն		
6	Նախադպրոցական կրթություն		
7	Արտադպրոցական դաստիարակություն, այդ թվում՝		
7.1	մշակույթի տուն, արվեստի, գեղարվեստի դպրոցներ/խմբակներ		
7.2	երաժշտական դպրոցներ/ խմբակներ		
7.3	մարզադպրոցներ/ սպորտային խմբակներ		
7.4	երիտասարդական կենտրոններ		
8	Թանգարաններ, ցուցասրահներ		
9	Գրադարաններ		
10	Սոցիալական ծառայություններ (ընտանեկան նպաստներ եւ այլն)		
11	Սոցիալական օգնության տրամադրում		

Հարգանքով՝ ԺԱԱ իրավախորհրդատու
Արինա Մեծոյան _____

Հավելված՝ 2

Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղեկատվության ազատության մասին»
Ոչ պաշտոնական քաղվածք

Ընդունել է ԱԺ-ն 2003թ. սեպտեմբերի 23-ին

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը
1. Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները:
2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա£

Հոդված 2. Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը
1. Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:
2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը£

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները
Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.
տեղեկատվության ազատություն՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.
Տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ.
տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք.
հանրային նշանակության կազմակերպություն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ.
Հարցում՝ տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում.
Հրապարակում՝ տեղեկությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այնուհետեւ՝ Ինտերնետ), ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնել եւ մատչելի դարձնել:

Հոդված 4. Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները
Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝
1) տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման միասնական կարգի սահմանումը.
2) տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը.
3) տեղեկությունների տրամադրման մատչելիության ապահովումը.
4) հրապարակայնությունը:

Հոդված 5. Տեղեկատությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը

Տեղեկատվության տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 6. Տեղեկատվության ազատության իրականացումը

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր կողմից փնտրվող տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցումով դիմել տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալ այդ տեղեկությունը:
2. Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից եւ ազատություններից կարող են օգտվել միայն Հայաստանի Հանրապետության օրենքով եւ (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:
3. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

Հոդված 7. Տեղեկությունների մատչելիության եւ հրապարակայնության ապահովումը

1. Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում£
2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձեւով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:
3. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.

1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները.
2) բյուջեն.
3) գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.
4) հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.
5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը.
6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը.
7) հասարակական միջոցառումների ծրագրերը.
8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը.
9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).
10) տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը.
11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.
12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.
13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:
5. Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձեւով, իսկ տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում նաեւ դրանով:
6. Հանրային նշանակության, ինչպես նաեւ բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են չհրապարակել սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ եւ 5-րդ
կետերում սահմանված տեղեկությունները եւ դրանց փոփոխությունները:

Հոդված 8. Տեղեկատվության ազատության սահմանափակումները

1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք.
2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.
3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:
3. Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե՝

1) դա վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին.

2) դա ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

3) դրա չտրամադրումը բացասական ազդեցություն կունենա Հայատանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Հոդված 9. Հարցումը ներկայացնելու եւ քննարկելու կարգը

1. Գրավոր հարցումում նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը եւ այն պետք է լինի ստորագրված (իրավաբանական անձի դեպքումª դրա անվանումը, գտնվելու վայրը):

2. Գրավոր հարցումների գործավարությունն իրականացվում է քաղաքացիների դիմումների եւ բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգովª գործավարության մյուս ձեւերից առանձին:

3. Գրավոր հարցումներին պատասխան չի տրվում, եթե՝

1). դա չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները.

2) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են.

3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունը ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:

4. Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

5. Բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը£ Բանավոր հարցման պատասխանը տրվում է, եթե՝

1) պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը.

2) անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը.

3) անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինող կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը£

6. Բանավոր հարցումի պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Եթե բանավոր հարցմամբ դիմողը չի հայտնում իր անունը եւ ազգանունը եւ (կամ) բանավոր հարցումը չի համապատասխանում սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3 -րդ կետերով սահմանված պահանջներին, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցումին:

7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

2) եթե գրավոր դիմումում նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետոª 5-օրյա ժամկետում.

3) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

8. Գրավոր հարցումի պատասխանը տրվում է այդ հարցումում նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը պատասխանելու համար սույն օրենքով սահմանված ժամկետում, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

9. Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանըª հետ վերցնելով իր գրավոր հարցումը:

10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումը իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

11. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա գրավոր հարցմամբ դիմողին է տալիս տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցումի պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվումª արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

Հոդված 10. Տեղեկությունների տրամադրման պայմանները

1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենը) տրամադրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետեւյալ դեպքերում.

1) բանավոր հարցումներին պատասխանելիս.
2) մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս.
3) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս.
4) սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս.
5) սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով եւ 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս.
6) տեղեկության տրամադրումը մերժելիս:

3. Հանրային նշանակության կազմակերպություններն ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը:

4. Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունը ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

Հոդված 11. Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը եւ կարգը

1. Տեղեկության տրամադրումը մերժվում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:

2. Տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցումին, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է տեղեկատվություն տնօրինողի հիմնական պարտականությունների կատարմանը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի£

3. Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկետվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամեկտում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը£

4. Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան:

Հոդված 12. Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողների պարտականաությունները

Տեղեկատվության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը եւ հրապարակայնությունը .
2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը.
3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն.
4) սահմանել իր կողմից բանավոր եւ ¥կամ¤ գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը.
5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին£

Հոդված 13. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձը

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը:

2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը:
2) տեղեկություն փնտրողին մատչելի ձեւով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը:
3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները:

Հոդված 14. Պատասխանատվությունը տեղեկատվության ազատության խախտման համար

1. Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելու կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելու, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:

Հոդված 15. Օրենքի ուժի մեջ մտնելը

1.Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2004 թվականի հունվարի 1-ից: